

ՀԱՅ – ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարցազրույց թուրք պատմաբան եւ լրագրող Այշե Հյուրի հետ

Հարց– Ինչպե՞ս եք գնահատում այսօրվա թուրք-հայկական հարաբերությունները:

Պատ.– Կարծում եմ, որ դրանք լավ վիճակում չեն գտնվում: Թուրքիայի հայկական համայնքի հետ մեր երկրի հարաբերություններում լճացում է նկատվում: Հայաստանի հետ հարաբերությունները երկար ժամանակ է, ինչ սառեցված վիճակում են, կարծես դրվել են խոր սառցարանում. այլևս բոլորովին չեն խոսում դրանց մասին: Հայկական սփյուռքի հետ արդեն իսկ Թուրքիան երբեք լավ հարաբերություններ չի ունեցել, եւ բարելավման հույս էլ չի եղել, քանի որ Թուրքիայում, ընդհանուր առմամբ, շատ լուրջ սեւ քարոզչություն էր տարվում սփյուռքի դեմ: Այսինքն՝ արդյունքում երեք սյունների առումով էլ շատ բացասական վիճակում են գտնվում այդ հարաբերությունները: Մոտ ապագայի համար էլ հույսի ոչ մի նշույլ չեն տեսնում:

Հարց– Ինչպե՞ս եք գնահատում 1919–1921թթ. կայացած երիտթուրքերի դատավարությունները: Ձեր կարծիքով՝ այդ դատաքննություններում օսմանյան պետությունը եւ վերջինիս իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետությունը մի քայլ չի՞ կատարել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու ուղղությամբ:

Պատ.– Այն ժամանակվա դատական գործերը հնարավոր էր եղել հարուցել Մուդրոսի զինադադարից հետո՝ միջազգային եւ ներքաղաքական հավասարակշռության շնորհիվ: Եթե հիշենք այդ հավասարակշռությունը, ավելի լավ կկարողանանք ըմբռնել, թե ինչու են այս դատական գործերը նման զարգացում ունեցել, եւ ինչ էին նշանակում դրանք: Օսմանյան կայսրությունը պարտված էր դուրս եկել պատերազմից եւ 1918թ. հոկտեմբերի 30-ին ստորագրել էր Մուդրոսի զինադադարը: Անտանտի պետությունները երկար ժամանակից ի վեր խղճի խայթ էին զգում հայերի հանդեպ. նրանք մեղավորության զգացում ունեին իրենց իսկ հասարակությունների առաջ՝ հանուն սեփական շահերի քրիստոնյա

հայերի համայնքը օսմանյան պետության ողորմածությանը թողնելու համար: Միեւնույն ժամանակ վրդովմունք էին զգում իթթիհադականների նկատմամբ՝ պատերազմը երկու տարով երկարաձգելու եւ Անտանտի ուժերի՝ շուրջ երկու միլիոն զոհերի պատճառով: Դրա համար դաշնակից պետությունները փորձեցին որպես խաղաթուղթ օգտագործել հայերի տեղահանության մեղադրանքով հարուցված դատական գործերը:

Միջազգային ճնշումը շատ ծանր էր, բայց լուրջ էր նաեւ երկրի ներսից եկող ճնշումը: Օսմանյան պետությունում հակաերիտթուրքական պարբերականների արշավը, ինչպես նաեւ զինադադարի կնքումից անմիջապես առաջ վերաբացված օսմանյան խորհրդարանի պատգամավորների պալատի առաջին նիստերից մեկում իթթիհադական, Տրապիզոնի պատգամավոր Մեհմեդ Յաֆըզ բեյի՝ պատերազմի եւ տեղահանության ժամանակ կատարած հանցագործությունների եւ սպանությունների վերաբերյալ հետաքննություն կատարելու պահանջով մեկնարկած բուռն վիճաբանությունները տեսել էին մինչեւ 1918թ. դեկտեմբերի 21-ը, երբ մեջլիսը փակվել էր: Այդ քննարկումների արդյունքում որոշվել էր մեջլիսին կից մի հանձնաժողով ստեղծել՝ «պատերազմի եւ տեղահանության ոճրագործությունները քննելու» համար:

«Հինգերորդ հանձնաժողով» անվամբ հիշատակվող սույն հանձնաժողովից հետո հիմնվել էր նաեւ Չարաշահումները, հաշիվները եւ չարագործությունները հետաքննող հանձնաժողովը (այն հետագայում հիշվելու էր որպես «Մազհարի հանձնաժողով»)՝ իր նախագահի անունով): Այս մթնոլորտում վերստին հիմնվեց Ազատություն եւ համաձայնություն (Հյուրիեթ վե Իթիլյաֆ) կուսակցությունը, որը երիտթուրքերի կողմից փակվել էր 1913թ.: Նրանք նույնպես իթթիհադականներից վրեժ լուծելու ցանկություն ունեին:

Ի վերջո, ներքին եւ արտաքին ճնշումներն արդյունք տվեցին, եւ դատական գործերը մեկնարկեցին: Նիստերը դռնբաց էին մամուլի եւ բոլոր հետաքրքրվողների առաջ: Ջեմիլ Արիֆի նախագահությամբ մեղադրյալների դատապաշտպանները պաշտպանական ճառերը հիմնավորեցին հետեւյալ կերպ. «Հայերի կոտորածներին վերաբերող հանցագործությունները, սովորական հանցանքներ չհանդիսանալով, իրականացվել են կառավարության կողմից հրապարակված եւ սուլթանի կողմից վավերացված՝ տեղահանության մասին օրենքի կիրառման շրջանակներում»: Այսինքն՝ ընդունեցին, որ տեղահանությունը կենտրոնական կառավարության գործն է եղել: Առաջին մահապատժի դատա-

վճիռը կայացվեց Բողազլըյանի գավառապետ Քեմալ բեյի առնչությամբ: Վերջինիս մահապատժից անմիջապես հետո երիտթուրքերը մեծ ցույց կազմակերպեցին Ստամբուլում: Այնուհետև, երբ 1919թ. մայիսի 15-ին հունական բանակը մտավ Իզմիր, վարչապետ Դամաթ Ֆերիդը, իսկույն մի խումբ կալանավորների ազատ արձակելով, փորձեց մեղմել հասարակությանը: Անտանտի պետությունները տեսան, որ հանցագործները մեկ առ մեկ իրենց օձիքը փրկում են, եւ մնացածներին տարան Մալթա՝ անձամբ դատելու նպատակով:

Անգամ այսօր Չրանտ Դինքի սպանության գործի դատաքննության օրինակով էլ տեսնում ենք, որ իշխանությունները, ցանկության դեպքում, կարողանում են փակուղի մտցնել նմանատիպ դատական գործերը. չեն տրամադրում ապացույցներն ու փաստաթղթերը, ճնշման տակ են պահում վկաներին: Սակայն այն ժամանակ դրա կարիքն անգամ չէր եղել, որովհետև երիտթուրքերն արդեն իսկ ոչնչացրել կամ փախցրել էին բազմաթիվ փաստաթղթեր: Հայկական համայնքն ի վիճակի չէր դատաքննություններին հետեւելու եւ փաստաթղթեր տրամադրելու, քանի որ համայնքի առաջնորդները եւ հայ տղամարդիկ աքսորվել էին կամ սպանվել: Բավարար չափով իրար հետ չհամագործակցեցին նաեւ օսմանյան եւ ամերիկյան կառավարությունները: Դաշնակից պետությունները, իրենց ապագա շահերով մտահոգված, անտարբերություն դրսևորեցին դատաքննությունների նկատմամբ: Այս ամենի հետեւանքով Անտանտի տերությունները չկարողացան այնպիսի դատարան հիմնել, որը կդատեր Մալթայի հանցագործներին: Նրանք հարկադրված եղան կամաց-կամաց ազատ արձակել այնտեղի կասկածյալներին: Վերջիններս դարձան նորաստեղծ Թուրքիայի նշանավոր կադրերը:

Հարց– Ինչպես նշեցիք, Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր են ոչնչացվել կամ առեւանգվել: Սակայն իթքիհադականների դատաքննություններն իրականացրած դատարանները (Ռազմական արտակարգ ատյանի դատարանները) կարողացան բավական շատ վավերագրերի հասու լինել՝ հայերի կոտորածների վերաբերյալ: Գլխավոր դատավարության մեղադրական ակտում ուղիղ 41 միավոր պաշտոնական փաստաթղթի էր հղում արվում եւ արձանագրվում, որ հայերի ջարդերը կազմակերպվել էին օսմանյան պետության կողմից: Այսինքն՝ գլխավոր ամբաստանագրում նշվում էր, որ մեղավոր էին պետական ղեկավարները:

Պատ.– Իհարկե՛, թեև այդ դատավարությունները կայացել են քաղաքական շարժառիթներով, սակայն դատական գործերի շրջանակներում բազմաթիվ փաստաթղթեր են ներկայացվել, որոնց մեծ մասը ծածկագիր հեռագրեր էին, որոնք տարբեր նահանգներ ու գավառներ էին հղվել Ներքին գործերի նախարարությունից, 3-րդ եւ 4-րդ բանակի հրամանատարությունից, բանակային 5-րդ կորպուսից, 15-րդ դիվիզիայի հրամանատարությունից, Հատուկ կազմակերպությունից, Անկարայի նահանգից եւ Ստամբուլի կենտրոնական հրամանատարությունից: Այդ վավերագրերի բնագրերը դատական գործին էին կցվել՝ դատախազի եւ համապատասխան հաստատությունների կողմից արձանագրվելուց հետո: Տվյալ ժամանակաշրջանի թերթերում տպագրվել են թեև ոչ բոլոր, սակայն բազմաթիվ դատական գործերի արձանագրությունները: Դատարաններին ներկայացված այդ փաստաթղթերի մեծ մասն այսօր մեր ձեռքի տակ չի գտնվում: Դրանց մի մասը, ամենայն հավանականությամբ, Գլխավոր շտաբի արխիվում է: Ենթադրվում է, թե մի մասն էլ պատճենվել է դատարաններում որպես քարտուղար աշխատած հայերի կողմից եւ տարվել արտերկիր: Ես կարծում եմ, որ այդ վավերագրերը գտնվում են Երուսաղեմի հայոց պատրիարքարանի արխիվում: Իհարկե, եթե այդ բոլոր փաստաթղթերն ի մի բերվեն եւ վերագնահատվեն, կարելի է ավելի ճշգրիտ արդյունքի հասնել:

Այն հանգամանքը, որ Ստամբուլում կայացած դատաքննություններից հետո անգլիացիների կողմից Մալթա տարված անձինք չեն դատվել, թուրք պաշտոնական պատմագրության ներկայացուցիչներին հանգեցնում է այն ենթադրության, թե հանցագործություն չի էլ եղել: Նույնիսկ այդ թեմայով մի գիրք է գրվել նոր եւ նորագույն պատմության վերաբերյալ: Թուրք սյունակագիրները, տարբեր տեսանկյուններից այդ գրքին հղում անելով, քարոզչություն են անում, թե եթե այդ հարցը բարձրացվի միջազգային դատարանում, Թուրքիան կշահի դատը: Այնինչ, եթե Հրանտ Դինքի սպանության գործի դեպքում անգամ, երբ կատարողը եւ հրահրողները հայտնի են, հնարավոր է լինում «երկու-երեք երեխա են արել» դատավճիռը կայացնել, ապա 1919–1921թթ. լրիվ նորմալ է, որ պետությունը կարճում է այն դատական գործը, որին խառնված են եղել պետության բազմաթիվ օղակներ: Իրականում իմաստալի կլինի այն ժամանակվա դատավճիռը գնահատել այժմյան դատավճիռների համատեքստում, սակայն մարդիկ պատմությունն ընթերցում են այնպես, ինչպես իրենք են ուզում:

Չարք– Ակնհայտ է, որ ոչ բոլոր հանցագործներն են պատժվել, սակայն այնպիսի գլխավոր ոճրագործներ, ինչպիսիք են Թալեաթ փաշան, Էնվեր փաշան, Ջենալ փաշան, այսինքն՝ օսմանյան պետության կառավարության գրեթե բոլոր անդամները, դատվել են եւ դատապարտվել մահապատժի:

Պատ.– Այո՛: Մինչեւ 1921թ. հարուցվել էր 63 դատական գործ: Դրանցից 55-ը ընդունվել էր, 34-ի դեպքում ամբաստանյալները ենթարկվել էին տարբեր պատիժների: 21 դատաքննություն ավարտվել էր արդարացման վճռով, սակայն այդ արդարացումները պայմանավորված էին վկաների եւ ապացույցների պակասով: Էնվերը, Թալեաթը, Ջենալը եւ 13 հոգի դատվել են եւ 1919թ. հուլիսին հեռակա կարգով դատապարտվել: Սակայն իթթիհադական փաշաների վերաբերյալ կայացված դատավճիռները չեն իրականացվել, քանի որ նրանք 1919թ. նոյեմբերի 1-ի լույս 2-ի գիշերը ճողոպրել էին Ստամբուլից: Գերմանիան տեղյակ էր նրանց դատավարությունների մասին, բայց նրանց չհանձնեց օսմանյան պետությանը: Այդ մարդիկ փախան Շվեյցարիա եւ Գերմանիա, Ջենալն ու Էնվերն էլ հեռացան Ռուսաստան:

Ի վերջո, հայկական համայնքի որոշ ներկայացուցիչներ, մտածելով, որ հնարավոր չի լինելու սրանց պատիժներն ի կատար ածել, որոշեցին, որ իրենք իրագործեն նրանց մահապատիժները: «Նեմեսիս» կազմակերպության հսկողությամբ նախ սպանվեց Թալեաթը, ապա՝ Ջենալ Ազմին ու Բեհաեդդին Շաքիրը: Շատերը Թուրքիայում ենթադրում են, թե Ջենալը եւ Էնվերն էլ են «Նեմեսիսի» կողմից սպանվել, բայց ես կարծում եմ, որ այլ ուժեր են կանգնած եղել վերջին երկուսի սպանության հետեւում: Ջենալի սպանության հետեւում կարող է լինել թե՛ ռուսական զաղտնի ոստիկանությունը՝ ՉեԿԱ-ն, թե՛ վրացիները, թե՛ այս գործին կարող է անգլիացիների մատը խառը եղած լինել եւ թե՛ այդ ուժերը կարող է համագործակցած լինեն հայկական կազմակերպությունների հետ: Կարմիր բանակին ծառայած այն հայ հրամանատարը, որ սպանել է Էնվերին, ըստ իս՝ անմիջականորեն կապված չի եղել հայ վրիժառուների հետ: Բայց եւ այնպես՝ արդյունքում սպանվեցին հայասպան երեք առաջնորդները:

Դատապարտյալների մեջ եղել են նաեւ բնական մահով մահացածներ, 1926թ. Իզմիրի մահափորձի (Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի դեմ – «Ակունք»-ի խմբ.) դատաքննության արդյունքում մահապատժի ենթարկվածներ, տարբեր արկածներից մեռածներ: Եթե վերջիններիս հավելենք նաեւ քաղաքական հակառակորդների կողմից սպանվածներին, ապա

կտեսնենք, որ 1915թ. հանցագործների մի նշանակալի մասին վերացրել էին դեռ այն տարիներին:

Չարք – Ինչպես նշում է Վահագն Դադրյանը, գլխավոր ամբաստանագրում հանդիպում է “taammüden” (կանխամտածված կերպով) բառը, որը շատ կարելու է կոտորածների՝ նախապես ծրագրված հանցագործություն լինելու առումով...

Պատ. – Եթե անգամ “taammüden” բառը չլիներ էլ, այն բանից, որ տեղահանությունը ամիսներ է տևել, որ մահերը գրանցվել են բոլորի աչքի առաջ, բայց չեն կանխվել, արդեն իսկ հասկացվում է, որ դրանք եղել են կանխամտածված: Նացիստների կատարած ցեղասպանության ժամանակ գրավոր ծրագիր կա՞ր: Մի՞թե Հիտլերն ասել էր՝ «ես հրեաներին կանխամտածված կերպով եմ սպանելու»: Այս դեպքում եւս բոլորովին էլ էական չէ նման փաստաթղթի կամ բացահայտ խոստովանության առկայությունը: Դեպքերի ընթացքը, դրանց ժամանակ կատարված նամակագրությունները եւ, անշուշտ, դատական գործերի շրջանակներում կենտրոնի՝ ծրագիր եղած լինելու մասին խոստովանություններն ինքնին մատնանշում են դեպքերի կանխամտածված լինելը: Գոյություն ունեն նամակագրություններ, որոնցում առկա են «Հրաման ստացանք: Հետեւյալ կերպ է եղել» արտահայտությունները: Դրանք բոլորն էլ, բնականաբար, մատնանշում են ծրագրի առկայության փաստը: Քանզի երբ տեղահանությունն սկսվել է, մատյաններ են կազմվել, արձանագրություններ կատարվել, սակայն բոլոր նախապատրաստությունները միակողմանի են եղել. հայերի հեռանալու ուղղությամբ աշխատանքներ կատարվել են, իսկ հետ վերադառնալու՝ ոչ:

Այսօր թուրքական պաշտոնական թեզի ջատագովներն ասում են. «Եղբայր, կառավարությունը չէր նախատեսել այդ հետեւանքները, չէր մտածել, որ այդպես կլինի: Նրանք այնտեղ էին ուղարկվել բարի նպատակներով»: Ըստ իս՝ այս հարցում պետք է ուշադրություն դարձնել այն կետին, որ կառավարությունը պետք է կարողանար նախատեսել այդ պայմանները: Այն էական կետը, որ պետք է ընդգծել, հետեւյալն է. թեեւ շարունակաբար զեկուցումներ են հղվել, սակայն ոչ մի բան չի արվել (հայերի մահվան դեպքերին) արգելք լինելու ուղղությամբ: Բացի այդ՝ կարծում են, որ անհրաժեշտ է իրավական տարբեր հարթակներում քննարկել այն տեղահանությունները, որոնք կատարվել են այնպիսի վայրերից, ինչպիսիք են Վանը եւ Ջեթունը, որտեղ պետությանը հայտնի

դարձած դիմադրություն էր գրանցվել, եւ այն տեղերից իրականացված տարագրությունները, որտեղ ոչ մի դիմադրություն չէր եղել: Քանզի այսօր պաշտոնական պատմագրության ներկայացուցիչներն անընդհատ քարոզում են, թե «Տեղահանությանը հարկադրել են Վանում եւ նման այլ վայրերում գրանցված զարգացումները»: Մինչդեռ, դիմադրություն չեղած վայրերի առումով ոչ մի փաստարկ չկա իթթիհադականների պաշտպանելու:

Թարգմանեց Մելինե Անունյանը

Akunq.net

11.02.2012

**ՆՈՐ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ.
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ
Գագիկ Տեր-Հարությունյան**

Այն, ինչ կատարվում է այսօր Սիրիայում եւ Իրանի միջուկային ծրագրի շուրջ, այսպես կոչված «արաբական գարնան» տրամաբանական շարունակությունն է: Միեւնույն ժամանակ, ընդհանրությունների հետ մեկտեղ, «սիրիական» գործընթացներն ունեն առանձնահատկություններ, որոնք բնորոշ չէին արաբական հեղափոխական հաղթարշավին: Նկատենք նաեւ, որ այս՝ պայմանականորեն երկրորդ փուլում առավել հստակ են արտահայտվում Մերձավոր եւ Միջին Արեւելքում աշխարհաքաղաքական խոշոր դերակատարների գործողությունների իրական դրդապատճառները: Հայտնի է, որ դրանք պաշտոնապես գրեթե չեն հայտարարվում եւ ներկայացվում են որպես մարդու իրավունքների ու քաղաքական ազատությունների համար մղվող պայքար: Սակայն համեմատական վերլուծությունները, թերեւս, թույլ են տալիս կատարել որոշ եզրահանգումներ:

Առաջին փուլի արդյունքները

Այսօր կարելի է ամրագրել, որ 2011-ին սկսված «հեղափոխությունների» առաջին փուլն ավարտվել է: Փորձենք ամփոփել այդ փուլի գլխավոր արդյունքներից մի քանիսը.

- Նախկինում քաղաքական ազդեցություն եւ տնտեսական զարգացման որոշակի մակարդակ ունեցող Լիբիան պետությունից, փաստորեն, վերածվել է «տարածքի», որտեղ կան էներգակիրների պաշարներ եւ տարբեր հատկանիշներով միավորված ու միմյանց դեմ հակամարտող բնակչության խմբեր:

- Արաբական աշխարհի առաջատար համարվող Եգիպտոսում իշխում են ոչ լեգիտիմ ռազմական «խունտան» եւ ժողովրդավարական նորմերի համաձայն ընտրություններում անվիճելի առավելության հասած իսլամիստները. նման համադրությունը գործնականում զրկում է այդ երկիրն արդիական զարգացման հեռանկարից առնվազն տեսանելի ապագայում:

Այս իրողությունները, անկախ ձեւավորման մեխանիզմներից, իրենց բովանդակությամբ եւ տրամաբանությամբ համընկնում են Իրաքում 2003թ. ամերիկյան ներխուժումից հետո ստեղծված իրադրությանը. այդ

երկիրը եւ նրա բնակչությունը մասնատվել են ըստ էթնիկ-դավանական հատկանիշների, պետական համակարգը, փաստորեն, չի գործում, իսկ միջդավանական բախումները եւ ահաբեկչությունները դարձել են մշտական երեւոյթ: Այսինքն՝ Իրաքն ավելի վաղ է ձեռք բերել բնական պաշարներ ունեցող «տարածքի» կարգավիճակ, եւ խոսել նրա զարգացման հեռանկարների մասին՝ նույնքան վիճահարույց է, որքան Լիբիայի կամ Եգիպտոսի պարագայում: Այսօր արվում է գրեթե ամեն ինչ, որպեսզի նման իրավիճակում հայտնվի Սիրիան, իսկ որոշակի սցենարներում՝ անգամ Իրանը:

Ակնհայտ է, որ այս օրինաչափությունը հետեւողական ռազմավարության արդյունք է: Ամերիկյան այդ «մեծ ռազմավարությունն» ունի տարբեր հարթություններ ու հետապնդում է տարաբնույթ նպատակներ, որոնց համալիր վերլուծությունն առանձին խնդիր է: Մասնավորապես, Սիրիայի եւ Իրանի շուրջ զարգացումների համատեքստում, հիմնական դրդապատճառներից մեկը ԱՄՆ տարածաշրջանային «թիվ 1» դաշնակից Իսրայելի անվտանգության ապահովումն է: Նախկինում այդ երկրի եւ ժողովրդի ոչնչացման մասին հայտարարություններ կարելի էր լսել բավական հաճախ: 2003-ին սկսված տարածաշրջանի վերափոխման արդյունքում նման հայտարարություններ կատարում են, թերեւս, միայն Իրանի ղեկավարները:

Նկատենք, որ տարածաշրջանային գործընթացներում առկա է նաեւ մեկ այլ հստակ օրինաչափություն: Վերը ներկայացված «տարածքային» իրադրությունը ձեւավորվել է, ինչպես նշեցինք, ԱՄՆ ու նրա դաշնակիցների նպատակասլաց գործողությունների շնորհիվ: Սակայն մինչեւ վերջերս այդ գործողությունները չեն հանդիպել այլ աշխարհաքաղաքական դերակատարների լուրջ, նյութականացված դիմադրությանը: Ներկա փուլում իրավիճակը սկզբունքորեն փոխվել է, եւ դա պայմանավորված է մի շարք գործոններով:

Սիրիան եւ Իրանը՝ «կրիտիկական ենթակառուցվածք»

Սիրիական ճգնաժամը միջազգայնացվել է եւ ձեռք բերել, եթե կարելի է այդպես ձեւակերպել, «գլոբալ կարգավիճակ»: Նախկինում արաբական «հեղափոխական» երկրներում «իշխանություն – ընդդիմություն» հակամարտությունում միայն վերջինս էր ստանում ռազմաքաղաքական, տնտեսական, տեղեկատվական եւ այլ բնույթի աջակցություն: Օգնությունը, որպես կանոն, իրականացնում էին ԱՄՆ-ը, եվրոպական երկրները, որոնցից ակտիվությամբ աչքի էին ընկնում Ֆրանսիան եւ համեմատական ողջախոհությամբ՝ Գերմանիան: Խիստ կարեւոր է հատկապես տարածա-

շրջանային երկրների, մասնավորապես՝ Սաուդյան Արաբիայի, Կատարի, Թուրքիայի եւ անգամ «Ալ-Քաիդայի» կողմից (ի դեպ, վերջինս խիստ ակտիվ է հատկապես Սիրիայի խնդրում) ընդդիմությանը տրամադրվող տարաբնույթ աջակցությունը:

Այլ է իրողությունը Սիրիայի պարագայում, որտեղ իշխանություններին անմիջականորեն սատարում է նրա տարածաշրջանային դաշնակից Իրանը: Նկատի ունենալով, որ «սիրիական հեղափոխության» հիմնական դրդապատճառներից մեկը տարածաշրջանում Իրանի ազդեցության նվազեցումն է, պետք է հաշվի առնել նաեւ այն համերաշխությունը, որը ձեւավորվել է Իրանի, Պակիստանի եւ Աֆղանստանի միջեւ: Հատկանշական է նաեւ, որ Սիրիան օգնություն է ստանում նաեւ իր անմիջական հարեւաններից՝ Իրաքից (այդ երկրի շիաների առաջնորդ Մոքթադա աս-Սադրի զինյալների տեսքով) եւ լիբանանյան «Հիզբալլահից» (վերջինիս կողմից վերահսկվող շրջաններից):

Սակայն ամենակարեւորը, թերեւս, այն է, որ սիրիական իշխանություններին սատարելու գործում այս կամ այն չափով ներգրավվել են նաեւ աշխարհաքաղաքական խոշոր «խաղացողները»՝ Ռուսաստանը եւ Չինաստանը: Այդ երկրների հայտնի «վետոն» ՄԱԿ-ում, իհարկե, չվերացրեց Սիրիայում տեղի ունեցող գործընթացներին արտաքին միջամտության հնարավորությունը: Հայտնի է, որ ՄԱԿ որոշումները զգալիորեն արժեզրկվել եւ կորցրել են իրենց նշանակությունը. բավական է հիշել 2003 թվականը, երբ ԱՄՆ-ը, հաշվի չառնելով ոչ ՄԱԿ կանոնադրությունը, ոչ էլ անգամ ՆԱՏՕ իր դաշնակիցների կարծիքը, գրավեց Իրաքը: Միեւնույն ժամանակ, դեռեւս թարմ է Լիբիայի նախադեպը, երբ ՄԱԿ-ի՝ տարբեր մեկնությունների տեղ թողնող բանաձեւը, փաստորեն, օրինականացրեց ՆԱՏՕ ինտերվենցիան: Ռուս-չինական «վետոն» զրկեց միջազգային լեգիտիմությունից նման սցենարի իրականացումը Սիրիայում:

Հատկանշական է, որ ՄԱԿ բուռն քննարկումներին հաջորդեցին ՌԴ ԱԳ նախարար Ս.Լավրովի եւ Արտաքին հետախուզության ծառայության տնօրեն Մ.Ֆրադկովի, իսկ փոքր անց՝ նաեւ ՉԺՀ ԱԳ փոխնախարար Չժան Ցզյունի այցերը Դամասկոս: Համաձայն լրատվամիջոցների հաղորդման, ՌԴ-ն մտադիր է հիմնականում ռուսական զենքով զինված Սիրիային վաճառել օդային եւ հրթիռային սպառազինություն (հաղորդագրություններում նշված ծավալը կազմում է \$4-5 մլրդ): Իսկ Ֆրադկովի ներկայությունը պատվիրակությունում վկայում է հատուկ ծառայությունների ոլորտում երկու երկրների միջեւ համագործակցության ակտիվացման մասին:

Այսպիսով, Սիրիայում եւ Իրանի շուրջ ծավալված գործողություններին անմիջականորեն ներգրավվել են տասնյակ երկրներ: Ընթացող

հակամարտությանը բնորոշ են Սառը պատերազմի բոլոր տարրերը. կողմերը լայնորեն կիրառում են դիվանագիտական եւ ռազմական, տեղեկատվական-հոգեբանական, տնտեսական եւ ահաբեկչական ներգործության հնարավոր բոլոր միջոցները: Մասնավորապես, ԱՄՆ-ը արդյունավետ կիրառում է ԽՍՀՄ-ի դեմ «սառը» հակամարտության ընթացքում իրեն արդարացրած տնտեսական եւ հոգեբանական ազդեցության մեթոդները: Ստեղծված բազմապլան իրադրությունը պայմանավորված է հետեւյալ հանգամանքներով.

- Բազմաբեւեռ աշխարհակարգի ձեւավորումը թեւակոխել է կայացման փուլ: Չնայած այսօր էլ ԱՄՆ-ը ռազմական հզորությամբ անհամեմատ գերազանցում է մնացյալ աշխարհաքաղաքական դերակատարներին, սակայն գերտերության քաղաքական եւ տնտեսական հնարավորությունները նկատելիորեն սահմանափակվել են: Այս իրողությունն աղեկվատ է ընկալվում Միացյալ Նահանգներում, եւ այդ տերության ռազմավարությունը մշակող ու քաղաքականությունը պլանավորող կառույցները ձգտում են օգտագործել իրենց՝ արդեն «ժամանակավոր» գերազանցությունը, որպեսզի առավելագույնս ամրապնդեն դիրքերը՝ հաշվի առնելով մրցակցության սաստկացումը բազմաբեւեռ ապագայում:

- Իրողություններն աղեկվատ են ընկալվում նաեւ ԱՄՆ ընդդիմախոսների կողմից, եւ նրանք արդեն սկսել են «անհնազանդության» նշաններ ցուցաբերել: Նման «անհնազանդությունը» պայմանավորված է ոչ միայն գլոբալ բազմաբեւեռ աշխարհակարգի ընդհանրական փիլիսոփայությունով, այլեւ կոնկրետ հաշվարկներով: Այսպես կոչված «Նոր Մերձավոր Արեւելքը» «տուրբուլիզացված տարածքի» (ներառելով այստեղ Աֆղանստանը) վերածելու ամերիկյան նախագիծը ենթադրում է ոչ միայն զրկել Ռուսաստանին եւ Չինաստանին ռազմաքաղաքական եւ տնտեսական լծակներից կարելորագույն տարածաշրջաններից մեկում, այլեւ սպառնում է «վարակել» նաեւ այդ տերություններին: Այսինքն՝ այդ նախագիծը կոնկրետ ուղղվածություն ունի, եւ դրա վերջնական իրականացմանն այսօր նյութականացված ձեւով խոչընդոտում է Իրան–Սիրիա «տանդեմը», որը յուրովի «կրիտիկական ենթակառուցվածք» է աշխարհաքաղաքական հակամարտության համատեքստում:

- Հիշատակված «տանդեմի» խոցելի օղակը Սիրիան է. եթե ԱՄՆ-ին եւ նրա դաշնակիցներին հաջողվի կոտրել Իրանի տարածաշրջանային հիմնական դաշնակցի դիմադրությունը, ապա դա զգալի չափով կփոխի ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում՝ ի վնաս Իրանի ու մնացյալ աշխարհաքաղաքական դերակատարների:

Հնարավոր զարգացումներ

Կառավարական ուժերի եւ «Սիրիական ազատ բանակի» (մոտ 20 հազար զինյալ) հակամարտությունը շարունակվում է տարուց ավելի, եւ առայժմ Ասադի բավական լավ զինված 300 հազարանոց բանակը կարողանում է այս կամ այն չափով վերահսկել իրադրությունը: Կողմերին դրսից մատակարարվող ռեսուրսների (այդ թվում նաեւ մարդկային) խնդրում նույնպես կարծես թե որոշակի հավասարակշռություն է ստեղծվել: Սակայն եթե երկրում տիրող խառնաշփոթությունը նպաստավոր միջավայր է ստեղծում զինյալների համար, ապա նման իրադրությունը խոչընդոտում է պետական մարմիններին՝ իրագործել իրենց բնորոշ գործառույթները: Այսինքն՝ ժամանակն ինչ-որ առումով աշխատում է զինյալ խմբավորումների համար: Դա թելադրում է իշխանությանը կատարել կոշտ ուժային քայլեր, որոնք, սակայն, գոնե առայժմ, ցանկալի արդյունքի չեն հասցնում: Այս ամենը, եթե չգտնվեն փոխզիջումային տարբերակներ, անգամ Ասադի վարչակազմի պահպանման պարագայում, կարող է հանգեցնել սիրիական պետության «էռզիայի» եւ այդ երկիրը նույնպես վերածել «տարածքի» ու յուրովի «սեւ խոռոչի», որը կլանում է իր դաշնակիցների ռեսուրսները:

Իրողությունն այլ է Իրանի պարագայում, որի դեմ ընդունված տնտեսական պատժամիջոցների եւ հոգեբանական գործողությունների հենքում ընկած է այդ երկրի միջուկային ծրագիրը: Հայտնի է, որ այս վերջին խնդիրը խիստ զգայուն է ընկալում Իսրայելը: Անշուշտ, ունենալով բավարար քանակությամբ սեփական միջուկային զենք եւ այն նպատակին հասցնելու միջոցներ՝ այդ երկիրը կարող է պատասխան (կամ անգամ՝ պրեվենտիվ, կանխարգելիչ) ծանր հարված հասցնել պոտենցիալ հակառակորդին: Միեւնույն ժամանակ, այդ ոչ մեծ տարածք ունեցող երկրին հասցրած անգամ մի քանի միջուկային հարվածները կարող են օրհասական լինել հրեական պետության համար:

Նախկինում Իսրայելը շատ կոշտ եւ վճռական էր վարվում միջուկային հավակնություններ ունեցող տարածաշրջանի երկրների հետ: 1981թ. հունիսի 7-ին Ֆրանսիայի օգնությամբ կառուցված Իրաքի միջուկային կենտրոնը ոչնչացվեց իսրայելական օդուժի կողմից: Ճակատագրի բերումով այդ գործողությունում կարելուր դեր կատարեց Իրանը, որը ոչ միայն տվեց իսրայելցիներին այդ տեղանքի մանրամասն քարտեզը, այլեւ ապահովեց իսրայելական կործանիչների վայրէջքը Թավրիզի օդանավակայանում: 2007-ի սեպտեմբերին Իսրայելը ոչնչացրեց սիրիական

միջուկային կենտրոնը, որը կառուցվել էր Յյուսիսային Կորեայի աջակցությամբ: Ամենայն հավանականությամբ, Իսրայելը նույն ձեռով կվարվեր նաև Իրանի հետ, եթե ունենար նման գործողության համար համապատասխան ռեսուրսներ եւ վստահություն, որ հետեւանքները խիստ ծանր չեն լինի իր համար:

Տեսականորեն, Իրանի միջուկային ներուժի ոչնչացման ռազմական տարբերակը հնարավոր է միայն ԱՄՆ անմիջական մասնակցությամբ, սակայն, փորձագետների կարծիքով, այն կպահանջի նաև լայնածավալ ցամաքային գործողություններ, որին պատրաստ չէ անգամ ԱՄՆ-ը՝ հաշվի առնելով աֆղանական գործոնը, Իրաքից զինուժի դուրսբերումը եւ, վերջապես, նախընտրական ժամանակաշրջանը:

Ստեղծված պայմաններում Սառը պատերազմի դեղատոմսերով Իրանի «պաշարման» ռազմավարությունը ոչ միայն անենաօպտիմալն է, այլև, թերևս, միակը: Միեւնույն ժամանակ, այդ տնտեսական-տեղեկատվական «պաշարումը» «բազմաբեւեռ» իրողություններում միշտ չէ, որ արդյունավետ է: Իրանը, չնայած տնտեսական խոշոր կորուստներին, բավական ճկուն կերպով կարողացավ բավարար չափով լուծել էներգակիրների արտահանման խնդիրը: Դրան զուգահեռ, չնայած հասարակության մի մասի «այլախոհական» դրսեւորումներին, առայժմ Իրանի բնակչության գերակայող հատվածը ամերիկա-իսրայելական գործոնն ընկալում է թշնամաբար: Այսինքն, ի տարբերություն «սառը պատերազմի» տարիների ԽՍՀՄ հանրությունում առկա արեւմտամետ կողմնորոշումների, որոնք եւ նպաստեցին այդ տերության փլուզմանը, իրավիճակն Իրանում այլ է: Այսինքն՝ կարելի է կարծել, որ այդ երկիրը կարող է արդյունավետ եւ համառ դիմադրել Սառը պատերազմի պայմաններում:

Նման սցենարի համատեքստում ուշագրավ են «Աթրատֆորի» այն կանխատեսումները, համաձայն որոնց՝ ԱՄՆ–Իրան լարված հարաբերությունները կարող են, որոշակի նախապայմանների դեպքում, վերափոխվել գործընկերության:

**ԻՐԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՅԵՏՈ
Սեւակ Սարուխանյան**

Ս.թ. մարտի 2-ին Իրանում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքները ոչ այլ ինչ են, եթե ոչ հասարակության կողմից իշխանություններին տրված վստահության արտահայտություն:

Ընտրություններն ու հասարակությունը

Չնայած թե՛ իրանական ընդդիմությունը (որը պաշտոնապես բոյկոտել էր ընտրությունները եւ դրանց չմասնակցելու կոչ արել հասարակությանը), թե՛ իշխանությունները սպասելիքներ ունեին, որ ընտրությունների արդյունքում կսրվի քաղաքական իրավիճակը երկրում, նման բան տեղի չունեցավ: Եթե հաշվի չառնվեն աննշան տեխնիկական թերությունները, որոնք արձանագրվեցին ընտրությունների ժամանակ, դրանք անցան բավական խաղաղ մթնոլորտում: Թեհրանում եւ Սպահանում արձանագրված փողոցային հակակառավարական ցույցերը եւ դրանց մասնակիցները խիստ սակավաթիվ էին: Հաշվի առնելով այն, որ միջազգային դիտորդներին ու լրագրողներին, մեծ քաղաքներից բացի, մուտք էր ապահովվել նաեւ Իրանի հեռավոր շրջաններ, որտեղ նույնպես ոչ մի լուրջ անախորժություն չէր արձանագրվել, կարելի է նշել, որ իշխանություններին հաջողվեց ապահովել ընտրությունների թափանցիկությունը: Անգամ ծայրահեղ ընդդիմադիր հայացքներ քարոզող իրանական ինտերնետ-կայքերում խախտումների մասին հրապարակված տեղեկություններն արձանագրել են ոչ լուրջ թերություններ, ինչը վկայում է նաեւ այն մասին, որ անգամ ընդդիմությանը պարզ է. իշխանություններն ընտրությունների արդյունքում տարել են վճռական հաղթանակ, իսկ նոր ձեւավորված խորհրդարանը, առանց որեւէ տարրմբռնման, կարող է կոչվել լեգիտիմ:

Թեեւ ծայրահեղ ընդդիմությունը չմասնակցեց ընտրություններին, սակայն մրցակցային պայքարի մեջ էին մտել երկու հիմնական պահպանողական թեւերը՝ ավանդական եւ նոր պահպանողականները: Եթե վերջիններս ակնհայտորեն աջակցել եւ աջակցում են նախագահ Մ.Ահմադինեժադին, ապա առաջինները հիմնականում քննադատաբար են վերաբերվում կառավարությանը եւ նրա ներքին տնտեսական քաղաքակա-

նությանը: Այս տեսանկյունից նախագահին ընդդիմացող ուժերի օգտին տրված քվեն միջոց էր պաշտպանելու այն թեւին, որը նպատակ ունի սահմանափակել գործող նախագահի՝ կարելու որոշումների ընդունման ազատությունը:

Տպավորիչ է փաստը, որ ընտրություններին մասնակցել է բնակչության 65%-ը՝ հաշվի առնելով, որ վերջին 8 տարիներին բնակչության հետաքրքրվածությունն ընտրություններով բավական նվազել էր, քանի որ հասարակությունը հիմնական փոփոխությունները երկրում կապում է ոչ թե խորհրդարանի, այլ նախագահի եւ հոգեւոր իշխանությունների հետ: Օրինակ, 2008թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցել է բնակչության ընդամենը 52%-ը՝ չնայած այս ընտրությունները բոլորտած ընդդիմության մասնակցությանը:

Ընտրություններին բարձր մասնակցությունը, թերեւս, կարելի է բացատրել նաեւ այն հանգամանքով, որ իրանցիների մի մեծ հատվածի համար խորհրդարանական ընտրությունները դարձան ազգային նշանակության խնդիր՝ հաշվի առնելով այն, որ բավական մեծացել է ամերիկյան կամ իսրայելական ռազմական ագրեսիայի հնարավորությունը: Այս տեսանկյունից ընտրություններին մասնակցությունը ոչ այնքան վստահության քվե էր իշխանություններին, որքան վստահության քվե սեփական պետականությանն ու ինքնիշխանությանը:

Ընտրությունների արդյունքները

Չնայած ընտրությունների ամբողջական ամփոփումը տեղի կունենա միայն 2-րդ փուլից հետո՝ մայիսի սկզբին, սակայն 290 պատգամավոր ունեցող մեջլիսի ավելի քան 220 տեղերն առաջին փուլի արդյունքներով արդեն բաշխված են: Նշենք այն հիմնական արդյունքները, որոնք գրանցվել են ընտրությունների ժամանակ:

Առաջին. ընտրությունների բացահայտ առաջատարն է Միավորված պահպանողականների ճակատը, որը, մինչեւ երկրորդ փուլի անցկացումն ու դրա արդյունքների ամփոփումը, արդեն խորհրդարանում ունի 120 պատգամավոր: Այս քանակն էլ ավելի կավելանա երկրորդ փուլից հետո, հավանաբար՝ անցնելով խորհրդանշական 145-ը, այսինքն՝ մեջլիսի 50 տոկոսից ավելին: Գակատը ֆորմալ ղեկավարվում է ներկայիս խորհրդարանի խոսնակ Ալի Լարիջանիի կողմից, սակայն հիմնական աջակցությունը ստանում է բարձրագույն հոգեւոր իշխանություններից եւ անձամբ առաջնորդ Ալի Խամենեյիից: Գակատի պաշտպանությամբ է հանդես գալիս նաեւ Իրանի նախկին նախագահ Յաշեմի-Ռաֆսանջանին: Այս ճակատը նաեւ անվանում են «Լարիջանիի եւ Ղալիբաֆի դաշինք», քանի

որ այն անուղակիորեն աջակցում է Թեհրանի քաղաքապետ Ղալիբաֆի՝ 2013 թվականի նախագահական ընտրություններում հաղթանակի հեռանկարին:

Երկրորդ. ընտրությունների հիմնական արդյունք պետք է համարել Մ.Ահմադինեժադի աջակիցների պարտությունը: Ըստ տարբեր հաշվարկների, նոր խորհրդարանում նախագահը կունենա ընդամենը 30 աջակից պատգամավոր, որոնք դժվար թե կարողանան լուրջ հեռարան հանդիսանալ կարեւորագույն որոշումների ընդունման ժամանակ:

Երրորդ. այս ընտրություններում նորություն կարելի է համարել «անկախ թեկնածուների» հաղթանակը: Անդամագրված չլինելով որեւէ քաղաքական դաշինքի՝ նրանք կարողացել են նորընտիր խորհրդարանում ստանալ մոտ 70 տեղ: Նրանցից ոմանք կարող են կամ միանալ արդեն ձեւավորված դաշինքներին, կամ էլ, ինչը հաճախ է լինում, ձեւավորել սեփական անկախ խմբակցություն: Սակայն իրանական խորհրդարանի անկախ խմբակցության յուրահատկություններից է նաեւ այն, որ դրանցում ընդգրկված պատգամավորները գրեթե բոլոր քվեարկությունների ժամանակ սեփական դիրքորոշմամբ են հանդես գալիս: Թե ինչ վարք կունենան նոր «անկախականները», դժվար է կանխատեսել: Սակայն, ինչպես նշում են բազմաթիվ իրանական վերլուծություններ, «անկախականների» մեջ նույնպես բավական մեծ թիվ են կազմում հատուկ ծառայությունների եւ բանակի վետերանները, որոնք սովորաբար պաշտպանել եւ պաշտպանում են ավանդական պահպանողականներին: Բացի այդ, «անկախականների» մեջ շատ են իրանական մեծածախ առեւտրի (շուկաների հարուստ շերտի) ոլորտի ներկայացուցիչները (bazaaris), որոնք ապագա խորհրդարանում ներկայացնելու են իրանական տնտեսության ոչնավթային սեկտորի շահերը:

Վերջինիս դերակատարումն Իրանում բավական ուժեղանալու է, քանի որ արեւմտյան պատժամիջոցների արդյունքում իրանական բանկերի արտարժույթային գործարքները միջազգային եւ արեւմտյան մասնավոր ֆինանսական ինստիտուտների հետ սահմանափակվել են: Այս տեսանկյունից ակնհայտ է, որ բիզնեսի ներկայացուցիչների մուտքն իրանական խորհրդարան զուտ ֆինանսական եւ տնտեսական տեսանկյունից արդարացված է եւ միտված առեւտրային ոլորտի շահերը խորհրդարանում ներկայացվելուն: Ինչպես բանակի ու հատուկ ծառայությունների վետերանները, այնպես էլ առեւտրային սեկտորի ներկայացուցիչները միշտ հանդես են եկել ավանդական պահպանողականների աջակցությամբ, ինչն այս խումբը եւս կուղղի հակառակադաշինական ճամբար:

Յինական քաղաքական փոփոխությունները

Յինականում խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձեւավորված նոր քաղաքական մթնոլորտը դրդեց դեռեւս գործող իրանական խորհրդարանին մարտի 14-ին խորհրդարանական լսումների հրավիրել Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադին: Այս լսումները կարելի է համարել Իրանի նախագահի համար վերջին 7 տարիների ամենատհաճ քաղաքական իրադարձություններից մեկը: Յաշվի առնելով այն, որ խորհրդարանական ընտրությունները ցույց տվեցին նախագահի «թել» թուլությունն ու նրան սատարող ուժերի անկարողությունը, պատգամավորներն իսկական հարձակում ծավալեցին նախագահի եւ նրա կառավարության դեմ: Յնչեցված հարցերը սուր էին, որոշ դեպքերում՝ վիրավորական. կոռուպցիա կառավարության ներսում, պոպուլիզմ տնտեսական քաղաքականությունում, անհարգալից հռետորաբանություն եւն: Նախագահի պատասխանները նույնպես աչքի էին ընկնում յուրահատկությամբ: Սուր հարցերին նա պատասխանում էր անհաջող կատակներով, իրական քննադատությամբ՝ հակառակ քննադատությամբ: Պետք է նշել, որ 2 ժամ տեւած հարցուպատասխանն ու ելույթներն ուղեկցվում էին բավական լավ կազմակերպված փողոցային ակցիայով: Սեջլիսի դիմաց հավաքվել էին նախագահի դեմ բողոքողները, որոնք Ահմադինեժադի մուտքը մեջլիս դիմավորեցին սուլոցներով: Այն, որ ոստիկանությունն ու անվտանգության ծառայությունը ոչինչ չարեցին այս «սպոնտան» ցույցը ցրելու համար, վկայում է բարձրագույն իշխանությունների կողմից դրա կազմակերպված լինելու մասին:

Բուն հարցուպատասխանից հետո նախագահը մի քանի անհարգալից կատակներով պատասխանեց սուր քննադատությանը, ինչն առաջացրեց որոշ ազդեցիկ պատգամավորների զայրույթը: Խորհրդարանի նախագահ Ալի Լարիջանին, որին Մ.Ահմադինեժադը ժամանակին հեռացրել էր կառավարության համակարգից, անթաքույց զայրույթով ընդհատեց նախագահին՝ «Խորհրդարանը կատակների վայր չէ» խոսքերով: Պատգամավոր, այսթուլա Կ.Ալիխանին հայտարարեց. «Խորհրդարանի հակաճախագահական տրամադրվածությունն այսօր էլ ավելի ուժեղացավ: Սրա տրամաբանական շարունակությունը պետք է դառնա նախագահի իմփիչմենթը»: Նախագահին ինքն իր հանդիպումն ավարտեց խոսքերով, որոնք ցնցեցին պատգամավորներին. «Ես պատասխանեցի ձեր բոլոր հարցերին: Յինա, եթե դուք ինձ ցածր գնահատական դնեք, դա տղամարդավարի չի լինի»: Այս խոսքերից հետո պատգամավորների մի

մասը դուրս եկավ դահլիճից, մի մասը սկսեց սուլել եւ անգամ բղավել:

Հատկանշական է, որ նախագահին ուղղված հարցերի մի մասն անմիջական աջակցություն էր թեհրանի քաղաքապետ Ղալիբաֆին, որը նպատակ ունի 2013-ին զբաղեցնել նախագահի պաշտոնը: Մասնավորապես, պատգամավորներին հուզում էր, թե ինչու կառավարությունը թեհրանի մետրոյի շինարարությունը չի ֆինանսավորում, ինչը, համաձայն որոշ կարծիքների, ուղղված է հենց Ղալիբաֆի հեղինակության դեմ: Նախագահի պատասխանը՝ «Գումար տվեք, ես էլ կֆինանսավորեմ», կարծես ոչ ոքի չէր հետաքրքրում:

Թե ինչ կլինի նախագահի հետ մոտակա մեկ տարվա ընթացքում՝ դժվար է ասել: Ամենայն հավանականությամբ, նա կշարունակի նախագահել եւ իր վրա կվերցնի արեւմտյան պատժամիջոցների հետեւանքով առաջացած սոցիալ-տնտեսական խնդիրների ողջ պատասխանատվությունն ու 2013-ին նախագահի աթոռը կզիջի «մաքուր» թեկնածուին, որը կխոստանա լուծել հասարակության բոլոր կենսական խնդիրները:

Խորհրդարանական ընտրությունների լուրջ արդյունք կարելի է համարել նաեւ այն, որ մարտի 15-ին Իրանի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեին նախկին նախագահ Ա.Ա. Հաշեմի-Ռաֆսանջանիին վերանշանակեց Նպատակահարմարության խորհրդի նախագահ 5 տարով, ինչն ազդարարում է ավանդական պահպանողականների իշխանության ամրապնդումը, ինչին հաջողվեց հասնել հենց խորհրդարանական ընտրությունների արդյունքում:

**ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԻՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ 2012-ԻՆ
Բենիամին Պողոսյան**

2012թ. ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը Իրանի միջուկային ծրագրի շուրջ հնարավոր զարգացումների վերաբերյալ կոնկրետ քայլերի մշակումն է: Սույն խնդիրը հատկապես կարելի է այն հանգամանքով, որ այս տարի ԱՄՆ-ում անցկացվելու են նախագահական ընտրություններ: Եվ չնայած ամերիկացի ընտրողների բացարձակ մեծամասնության համար արտաքին քաղաքական խնդիրները հետին պլանում են գտնվում, եւ այս կամ այն թեկնածուի օգտին քվեարկելու հարցում հիմնական կողմնորոշիչը տնտեսության վիճակն է, այնուամենայնիվ, արտաքին քաղաքականությունն ու առաջին հերթին Իրանի նկատմամբ իրականացվելիք հնարավոր քայլերը նախընտրական քննարկումներում որոշակի տեղ են զբաղեցնում:

Իրանի նկատմամբ Օբամայի վարչակազմի քաղաքականությունը կարելի է տեղ է զբաղեցնում հանրապետական թեկնածուների նախընտրական արշավում, որոնք Օբամային մեղադրում են չափազանց մեղմ դիրքորոշման մեջ՝ պնդելով, որ եթե Օբաման եւս չորս տարի զբաղեցնի նախագահի պաշտոնը, ապա ամենայն հավանականությամբ Իրանը ձեռք կբերի միջուկային զենք:

Միեւնույն ժամանակ, քննարկելով Իրանի նկատմամբ ԱՄՆ հնարավոր քայլերը, հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ արտաքին քաղաքականությունում Օբամայի վարչակազմի հիմնական հաղթաթուղթն ամերիկացիների շրջանում ժողովրդականություն չվայելող պատերազմների ավարտն է: Ամերիկյան զորքերը դուրս են բերվել Իրաքից, սահմանվել է Աֆղանստանից զորքերի դուրսբերման հստակ ժամկետ: Ամերիկյան վարչակազմը հայտարարել է Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանին առավել մեծ ուշադրություն դարձնելու անհրաժեշտության մասին՝ հստակ նշելով, որ 21-րդ դարում ԱՄՆ թիվ 1 խնդիրն այդ տարածաշրջանում սեփական դիրքերի ապահովումն է՝ հաշվի առնելով միջնաժամկետ հեռանկարում Չինաստանի աճող տնտեսության եւ ավելացող ռազմական ծախսերի պայմաններում ԱՄՆ-ին սպառնացող վտանգները:

Ամերիկյան վարչակազմը եւ ամերիկյան վերլուծական առավել խոշոր

կենտրոնների ներկայացուցիչները նշում են, որ իրաքյան պատերազմը ռազմավարական սխալ էր, որը ոչ միայն հսկայական ծախսերի պատճառ դարձավ, այլև զգալիորեն սրեց ԱՄՆ հարաբերությունները մահմեդական աշխարհի հետ եւ վնաս հասցրեց աշխարհում ԱՄՆ հեղինակությանը: Ստեղծված պայմաններում Մերձավոր Արեւելքում նոր պատերազմը կհարվածի Օբամայի հեղինակությանը՝ վտանգելով նրա վերընտրությունը, մանավանդ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ամերիկյան տնտեսությունը բավական դանդաղ է վերականգնվում, եւ այդ առումով գործող նախագահի վարկանիշն այնքան էլ բարձր չէ:

Քննարկելով Իրանի նկատմամբ ամերիկյան վարչակազմի հնարավոր քայլերը՝ հարկ է նշել, որ Իրանին ռազմական հարված հասցնելը ոչ միայն լուրջ բարդություններ կստեղծի գործող նախագահի վերընտրության համար, այլև, ամենայն հավանականությամբ, թույլ չի տա երկար ժամանակով կասեցնել Իրանի միջուկային ծրագրի զարգացումը: Նույնիսկ Իրանին ռազմական հարված հասցնելու կողմնակից վերլուծաբաններն ընդունում են, որ լավագույն դեպքում նմանատիպ քայլը կարող է հետաձգել Իրանի կողմից միջուկային զենքի ստեղծումը մեկ կամ երկու տարով, ինչը ռազմավարական առումով էական նշանակություն չի կարող ունենալ տարածաշրջանային զարգացումների վրա:

Միեւնույն ժամանակ, Իրանի դեմ ռազմական գործողությունները կարող են նպաստել գործող վարչակարգի շուրջ բնակչության համախմբմանը: Բացի այդ, ամերիկյան վերլուծաբանները, ինչպես նաեւ հետախուզական հանրույթի ներկայացուցիչները նշում են, որ չկա հստակ ապացույց այն բանի, որ Իրանի բարձրագույն ղեկավարությունը վերջնական որոշում է ընդունել միջուկային զենքի ստեղծման վերաբերյալ, մինչդեռ ցանկացած ռազմական հարված կարող է դրդել նրանց նմանատիպ որոշման ընդունմանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ դեպքում Իրանը շատ ավելի ապահովագրված կլինի հետագա ռազմական հարվածից:

Նմանատիպ հաշվարկների համար հիմք կարող է ծառայել ԱՄՆ քաղաքականությունը Յուսուսային Կորեայի նկատմամբ, որն արդեն իսկ ստեղծել է միջուկային զենք եւ ակտիվորեն աշխատում է այն տեղափոխող հրթիռների ստեղծման եւ արդիականացման ուղղությամբ: Այն ավելի մեծ վտանգ է պարունակում ԱՄՆ-ի համար, քան Իրանի կողմից միջուկային զենքի ստեղծումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջիկա տարիներին Յուսուսային Կորեան կարող է ստեղծել հրթիռներ, որոնք ի վիճակի կլինեն միջուկային հարված հասցնել ԱՄՆ խաղաղօվկիանոսյան ափին: Սակայն, չնայած դրան՝ ԱՄՆ-ում ոչ ոք չի քննարկում

Հյուսիսային Կորեայի դեմ ռազմական գործողություններ իրականացնելու հնարավորությունը՝ դրա փոխարեն պաշտոնական Փեկինյանին առաջարկվում են տարատեսակ օգնության փաթեթներ՝ փորձելով այդ ճանապարհով վերջինիս հետ պահել միջուկային ծրագրի հետագա մշակումներից:

Ամերիկյան վարչակազմի համար ակնհայտ է, որ Իրանի դեմ ռազմական գործողությունների դեպքում պաշտոնական Թեհրանն ի վիճակի է ձեռնարկել ոչ միայն սիմետրիկ, այլև ասիմետրիկ պատասխան գործողություններ, որոնց քվում են Հորնուզի նեղուցի ականապատումն ու այդ ճանապարհով նավթի միջազգային շուկաներում առնվազն մի քանի ամիս քառսի ստեղծումը, Իրաքում ամերիկյան շահերի դեմ գործողությունների իրականացումն իրանամետ շիա խմբավորումների միջոցով, Աֆղանստանում ամերիկյան զորքերի դեմ ահաբեկչական գործողությունները, «Հիզբալլահի» եւ ՀԱՄԱՍ-ի միջոցով ահաբեկչական գործողությունների իրականացումն Իսրայելի տարածքում:

Իրանի դեմ ռազմական հարվածը կարող է հանգեցնել միջուկային ծրագրի երկարաժամկետ սառեցմանը միայն ցամաքային գործողությունների իրականացման դեպքում, ինչի հավանականությունը գրեթե լիովին բացառվում է՝ հաշվի առնելով Իրաքյան գործողության փորձը: Ցամաքային գործողության հնարավորությունը չի քննարկվում անգամ առավել մարտականորեն տրամադրված հանրապետականների շրջանում, որոնք եւս հասկանում են, որ ներկա պայմաններում դա անուղղելի հարված կհասցնի ամերիկյան շահերին:

Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ կարելի է պնդել, որ առնվազն մինչեւ տարվա վերջ ԱՄՆ-ի կողմից Իրանին ռազմական հարված հասցնելու հավանականությունը բավական փոքր է: Ինչ վերաբերում է Իսրայելի կողմից նման գործողության իրականացմանը, ապա դա եւս քիչ հավանական է, քանի որ ամերիկյան աջակցության բացակայության պայմաններում Իսրայելը չունի անհրաժեշտ հնարավորություններ սովորական սպառազինություններով Իրանի միջուկային ծրագրին էական վնաս հասցնելու համար, իսկ միջուկային զենքի կիրառման հավանականությունը մոտ է զրոյին:

Ամերիկյան գործող վարչակազմը նախընտրում է տնտեսական պատժամիջոցների կիրառման ճանապարհով Իրանի քաղաքականությունը փոխելու մարտավարությունը: Իրանի բնակչության մի զգալի հատված, որը հանդիսանում է կրոնապետական վարչակարգի հիմնական աջակիցը, գոյատևում է պետական տարատեսակ նպաստների հաշվին, որոնց շնորհիվ կարողանում է արտոնյալ գներով ձեռք բերել սննդամթերք,

վառելիք եւ կենսական անհրաժեշտության այլ ապրանքներ: Բնակչության այդ հատվածի համար նշված ապրանքների գների սուբսիդավորումը Իրանի պետական բյուջեից զգալի միջոցներ է պահանջում: Պետբյուջեի եկամուտների մի մեծ հատված գոյանում է նավթի վաճառքից: Պատահական չէ, որ ամերիկյան պատժամիջոցներն առաջին հերթին ուղղված են նավթի վաճառքի ծավալների կրճատմանը: ԱՄՆ-ը ակտիվորեն աշխատում է դաշնակիցների հետ՝ նրանցից պահանջելով կրճատել կամ ընդհանրապես հրաժարվել Իրանական նավթի գնումից: Սի շարք պետություններ, այդ թվում՝ Եվրամիության անդամ երկրները, ճապոնիան եւ այլն, արդեն զգալիորեն կրճատել են Իրանից նավթի գնումը:

Այս գործողություններն էական ազդեցություն են թողել Իրանի տնտեսության վրա: Իրանական տարադրամը վերջին ամիսների ընթացքում որոշակիորեն արժեզրկվել է, բարձրացել են առաջին անհրաժեշտության ապրանքների գները, պետության համար էլ ավելի դժվար է դառնում կենսական նշանակության ապրանքների գների սուբսիդավորումը: Ստեղծված իրավիճակը կարող է զգալիորեն մեծացնել իշխանությունների քաղաքականությունից դժգոհ մարդկանց թիվը, ինչը կարող է էական դժվարություններ ստեղծել վարչակարգի համար՝ հատկապես 2013թ. սպասվող նախագահական ընտրությունների համատեքստում:

Ամերիկյան վարչակազմի հաշվարկների համաձայն, տնտեսական պատժամիջոցների հետագա խորացումը բավական գործուն միջոց է միջուկային ծրագրի խնդրում Իրանի քաղաքականությունը փոխելու համար, եւ ամենայն հավանականությամբ ռազմական հարվածի փոխարեն ամերիկյան իշխանություններն առաջիկա ամիսներին կփորձեն հնարավորինս ավելի շատ պետություններ ներգրավել Իրանի դեմ իրականացվող պատժամիջոցներում:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արտաշես Տեր-Չարությունյան

Ապրիլին սպասվում է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի այցը Պեկին, ուր պետք է ստորագրվի «Միջուկային էներգիայի խաղաղ օգտագործման մասին» չին-թուրքական պայմանագիրը: Պայմանագիրը, որի նախապատրաստման համար երկար ժամանակ պահանջվեց եւ հատուկ որի համար փետրվարին Ստամբուլ ժամանեց ու Էրդողանի հետ հանդիպեց Չինաստանի փոխնախագահ Սի Ցզինպինը¹, նախատեսում է Թուրքիայի հյուսիս-արեւմուտքում՝ Բուլղարիային սահմանակից Իգնեադա քաղաքի մոտ կառուցել \$20 մլրդ արժողությամբ ատոմակայան:

Չայտնի է, որ Անկարան արդեն իսկ պայմանավորվածություն ունի Մոսկվայի հետ՝ Միջերկրականի ափին գտնվող Բույուքչէլի բնակավայրի մոտ, Ակկույու անվամբ վայրում ԱԷԿ կառուցելու վերաբերյալ: Եթե ընդամենը մի քանի տարի առաջ Թուրքիային վերաբերող միջազգային փորձագիտական զեկույցներում խոսվում էր Անկարայի կողմից սեփական միջուկային ծրագրի զարգացման միայն հնարավորության մասին, եւ թուրքական փորձագետներն ու պաշտոնյաներն այդ մասին բարձրաձայնում էին սոսկ որպես հնարավորություն, ապա այժմ փաստն այն է, որ Չայաստանի արեւմտյան հարեւանն իրականացնում է մասշտաբային մի ծրագիր՝ երկրում միջուկային հզորությունների հիմնման նպատակով:

Չաշվի առնելով, սակայն, ներկայում թուրքական պետության կողմից իրականացվող, ըստ էության, կայսերական արտաքին քաղաքականությունն ու այդ իմաստով հեռուն գնացող նպատակները՝ ծավալուն եւ արագ տեմպերով միջուկային ծրագրի կյանքի կոչումը հավանական է, որ պատճառաբանված չլինի զուտ էներգետիկ անվտանգության մտահոգություններով:

Թուրքիայի միջուկային պատմությունից

Միջուկային ոլորտով Թուրքիայում պաշտոնապես սկսեցին հետաքրքրվել 1956-ից, երբ կառավարության որոշմամբ հիմնադրվեց Ատոմային էներգիայի թուրքական հանձնաժողովը: Չնայած նշված մարմնի՝ տասնամյակներ տեւած գործունեությանը, թե՛ արեւմտյան, թե՛

ռուսական աղբյուրները գրում են, որ Թուրքիան միջուկային ոլորտում երբեք չի անցել հետազոտությունների եւ մշակումների սահմանագծից այն կողմ, որոնք էլ հիմնականում կենտրոնացած են եղել երկու հաստատություններում՝ 1961թ. Ստամբուլի տեխնիկական համալսարանում հիմնադրված Էներգիայի ինստիտուտում եւ 1962թ. ստեղծված Միջուկային հետազոտությունների եւ ուսուցման Չեկմեչեյի կենտրոնում:

Թուրքիայում ատոմակայանի կառուցման նախագծերը սկսեցին ի հայտ գալ 1970-ական թթ.: Առաջին նման նախագիծ Ատոմային Էներգիայի թուրքական հանձնաժողովը պատրաստեց 1970թ., որով նախատեսվում էր կառուցել 300 մվտ հզորությամբ ԱԷԿ: Երեք տարի անց որոշումը կանգ առավ 80 մվտ հզորությամբ ԱԷԿ-ի վրա, որը պետք է կառուցվեր վերը նշված Ակկույու վայրում, սակայն սույն նախագիծը չիրագործվեց՝ թուրքական կառավարությունում առկա ֆինանսական խնդիրների պատճառով: ԱԷԿ կառուցելու ծրագրերը չդադարեցին նաեւ 1980-ական թթ., սակայն ֆինանսական խնդիրների պատճառով դրանցից ոչ մեկը կյանքի չկոչվեց:

1992թ. թուրքական կառավարությունը հայտարարեց, թե Ակկույուում ԱԷԿ կառուցելու համար հրավիրում է միջազգային ներդրողների: Հայտ ներկայացրին այնպիսի խոշոր ընկերություններ, ինչպիսիք են Siemens-ը, Westinghouse-ը, Framatome-ը եւ Mitsubishi-ին: Սակայն մրցույթի անցկացումը եւ արդյունքների ամփոփումը տեւեց մինչեւ 2000թ., եւ ի վերջո թուրքական կառավարությունը հայտարարեց, թե ծրագիրը փակվում է տնտեսական հանգամանքներից թելադրված²:

Ինչպես հայտնի է, 1990-ական թթ. Թուրքիան բնութագրվում էր քաղաքական ու տնտեսական անկայունությամբ: Վիճակը փոխվեց հաջորդ տասնամյակում, երբ իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցության (ԱԶԿ) վերնախավը սկսեց իրականացնել հավակնոտ արտաքին քաղաքականություն (իր բնույթով աննախադեպ Թուրքիայի Հանրապետության համար): Ուստի, պատահական չէ, որ միջուկային ոլորտն անմիջապես գրավեց ԱԶԿ ուշադրությունը:

Թուրքիայի ներկայիս միջուկային ծրագրերի մասին

2010թ. Թուրքիայում արտադրվել է մոտ 230 մլրդ կվտ/ժամ էլեկտրաէներգիա: Դրա շուրջ կեսը ստացվել է բնական գազից³, 28%-ը՝ քարածխից, 20%-ը՝ հիդրոէլեկտրակայաններից: Եթե 1990թ. Թուրքիայում մեկ շնչին տարեկան բաժին էր ընկնում 800 կվտ/ժամ էլեկտրաէներգիա, ապա 20 տարի անց այդ թիվը կազմում էր տարեկան 2000 կվտ/ժամ:

Թուրքիայի վիճակագրական ծառայության հաշվարկի համաձայն, մինչև 2020թ.՝ յուրաքանչյուր տարի երկրում էլեկտրաէներգիայի պահանջարկը կաճի մոտ 7%-ով:

Ներկայացված թվերից երեւում է, որ Թուրքիայում իրոք առկա է էներգետիկ անվտանգության ապահովման խնդիր, եւ Անկարայում այս հանգամանքն այժմ էլ նշվում է որպէս լուրջ պատճառ, որը ստիպեց ձեռնամուխ լինել երկրում միջուկային հզորությունների հիմնմանը: Թուրքական կառավարության ծրագրերի համաձայն, նախատեսվում է 2023թ. գազից ստացված էլեկտրաէներգիայի չափաբաժինը ներկայիս 50%-ից նվազեցնել 30%-ի, ինչը պետք է արվի գլխավորապէս շնորհիվ ատոմակայանների եւ ինչը թույլ կտա լրջորեն ամրապնդել երկրի էներգետիկ անկախությունը:

2010թ. մայիսին Թուրքիայի ու Ռուսաստանի նախագահները ստորագրեցին մի համաձայնագիր, ըստ որի՝ Rosatom ընկերությունը՝ իր դուստր ձեռնարկությունների միջոցով, Ակկույունում կառուցելու է 4800 մվտ ընդհանուր հզորություն եւ 4 ռեակտոր ունեցող ատոմակայան: Գործարքի արժեքը կազմում է \$20 մլրդ, նախատեսվում է, որ ԱԷԿ շինարարությունը կսկսվի արդեն հաջորդ տարի, առաջին էներգաբլոկը շարք կմտնի 2018թ., որից հետո ամեն տարի պատրաստ է լինելու եւս մեկ էներգաբլոկ: Այսպիսով, 2021թ. 4 էներգաբլոկ ունեցող Ակկույունի ԱԷԿ-ը ամբողջովին կմիանա Թուրքիայի էներգաբաշխիչ ցանցին: Ըստ պայմանավորվածության, սկզբնական փուլում ԱԷԿ բաժնետոմսերի 100%-ը պատկանելու է ռուսական Rosatom ու PAO E3C ընկերություններին (քանի որ վերջիններս էլ հիմնականում ֆինանսավորում են նախագիծը), սակայն ամբողջական ԱԷԿ շահագործումից 15 տարի անց ռուսական ընկերությունների բաժնեմասը չպետք է գերազանցի 51%-ը:

2008-ից նախապատրաստական աշխատանքներ սկսեցին իրականացվել Սեւ ծովի ափին գտնվող թուրքական Սինոպ քաղաքի մոտ 5600 մվտ հզորությամբ երկրորդ ատոմակայանի եւ միջուկային տեխնոլոգիաների կենտրոնի կառուցման համար: Նախագծի ընդհանուր արժեքը գնահատվեց մոտ \$23 մլրդ: 2010թ. մարտին թուրքական Elektrik Uretim AS (EUAS) եւ հարավկորեական Korea Electric Power Corporation (Kepco) ընկերությունների միջեւ նախնական համաձայնություն կնքվեց նախագծի իրականացման համար:

Սակայն պայմանավորվածության իրականացումը կանգ առավ, քանի որ կորեական կողմը պահանջում էր, որպէսզի Թուրքիայի կառավարությունը, ինչպէս Ակկույունի ԱԷԿ-ի պարագայում է, երաշխավորի, որ յուրաքանչյուր տարի որոշակի քանակությամբ էլեկտրաէներգիա կգնի

Սինոպի ԱԷԿ-ից: Անկարան հրաժարվեց, եւ կարճ ժամանակ անց Սինոպի ԱԷԿ կառուցման համար թուրքական կողմի հետ բանակցությունների մեջ մտան ճապոնական Toshiba եւ Tepco ընկերությունները: Վերջիններիս հետ բանակցությունները նույնպես կանգ առան՝ 2011թ. մարտին ճապոնական Ֆուկուշիմա ԱԷԿ-ում տեղի ունեցած աղետից հետո:

Նշենք նաեւ, որ Սինոպի ԱԷԿ կառուցման նպատակով Անկարայի հետ բանակցություններ են վարել նաեւ ֆրանսիական Areva, GdF Suez եւ EDF ընկերությունները, սակայն կրկին անարդյունք: Ի վերջո, 2011թ. նոյեմբերին Թուրքիայի վարչապետ Էրդողանը դիմեց Յարավային Կորեայի նախագահ Լի Մյունգ-բակին՝ Kepco-ի հետ բանակցությունները վերսկսելու առաջարկով: Այս տարվա փետրվարին Ստամբուլում Յարավային Կորեայի նախագահը հարցի շուրջ բանակցություններ վարեց Թուրքիայի վարչապետի հետ, եւ ըստ լրատվամիջոցների՝ կողմերին հաջողվել է նախնական պայմանավորվածություն ձեռք բերել:

Եվ վերջապես, երրորդ ատոմակայանը, ինչպես նշեցինք, Թուրքիան մտադիր է կառուցել Սեւ ծովի ափին՝ Բուլղարիայի հետ սահմանից մոտ 5կմ հեռու գտնվող Իզմետդա քաղաքի մոտ: Իզմետդայի ԱԷԿ-ի շուրջ պայմանավորվածությունները չինական կողմի հետ թեւ կարծես թե սկզբունքային են, սակայն դեռ վերջնական չեն: Ստույգ հայտնի չէ անգամ կառուցվելիք ԱԷԿ հզորությունը:

Թուրքիան եւ միջուկային տերության հեռանկարը

2011թ. դեկտեմբերին թուրքական Vatan պարբերականը, հղում կատարելով Atomic Scientists Bulletin-ին, գրեց, թե թուրքական «Ինջիրլիք» ավիաբազայում տեղակայված ամերիկյան B61-12 տեսակի միջուկային մարտավարական 20 ռումբեր հետայսու պետք է կրեն (նշանակետերին հասցնեն) թուրքական օդուժի 142-րդ էսկադրիլիայի F-16A/B ինքնաթիռները: Ըստ հրապարակման, ԱՄՆ-ը կրճատել է Ինջիրլիքում տեղակայված միջուկային մարտավարական ռումբերի քանակը՝ 90-ից հասցնելով 70-ի, որոնցից 20-ը, ինչպես նշվեց, անհրաժեշտության դեպքում կրելու են թուրքական ռազմական ինքնաթիռները: Նույն աղբյուրի համաձայն, 2017թ. ավիաբազայում գտնվող B61-12 ռումբերը փոխարինվելու են ավելի նոր տեսակի՝ B61-3/4 ռումբերով:

Մնացած 50 ռումբերը տեղ հասցնելու համար ԱՄՆ-ը պետք է Թուրքիայից դուրս գտնվող իր ավիաբազաներից Ինջիրլիք տեղափոխի համապատասխան ինքնաթիռներ, որոնք «վերցնելով» ռումբերը՝ կհասցնեն համապատասխան նշանակետերին: Յայտնի է, որ Թուրքիան

հրաժարվում է թույլատրել Վաշինգտոնին իր տարածքում, այդ թվում՝ Ինջիրլիքում, տեղակայել միջուկային ռումբ կրելու ունակ ռազմական ինքնաթիռներ: Մինչեւ վերջերս հայտնի էր դրա հետեւյալ պատճառաբանությունը. քանի որ այդ պարագայում տվյալ ավիաբազան գործառնական տեսանկյունից ստանալով նոր հնարավորություններ՝ ձեռք է բերում ՆԱՏՕ-ական ավիաբազայի կարելություն եւ կարգավիճակ, ուստի եւ հնարավոր ռազմական բախման ժամանակ դառնում է հակառակորդի թիրախ: Այդ պարագայում նաեւ՝ ռազմակայանի նկատմամբ վերահսկողությունը մասամբ անցնում է ՆԱՏՕ-ական հրամանատարությանը:

Չրապարակված տեղեկության մեջ առանցքայինն, անշուշտ, այն է, որ Թուրքիան հնարավորություն է ստանում, անհրաժեշտության դեպքում մասնակցելու միջուկային հարվածին: Իհարկե, Ինջիրլիքում տեղակայված միջուկային մարտավարական ռումբերով հարված հասցնելու վերջնական որոշումը պատկանում է Վաշինգտոնին, սակայն ուշագրավն այստեղ այն է, որ թուրքական ռազմաքաղաքական ղեկավարությունը որոշում է կայացրել Անկարայի համար ստեղծել այդ հնարավորությունը, ինչը չկար, օրինակ, Սառը պատերազմի տարիներին՝ թուրքական կողմում առկա (վերը նշված)՝ միջուկային հարվածի թիրախ դառնալու մտահոգությունների պատճառով:

Չնարավոր է, որ թուրքական ռազմուժի համար միջուկային ռումբ կիրառելու հնարավորության ստեղծումն ամերիկյան կողմի պատասխանն էր Անկարայի այն քայլին, ըստ որի՝ ԱՄՆ-ը հնարավորություն ունեցավ Թուրքիայում՝ Մալաթիա քաղաքի մոտ տեղակայել իր հակահրթիռային պաշտպանության գլոբալ համակարգի տարրերից մեկը՝ ռադար:

Սակայն, մեր կարծիքով, այստեղ առավել կարելու է ոչ այնքան ամերիկա-թուրքական նշված (ենթադրվող) պայմանավորվածությունը, որքան, ինչպես նշեցինք, Թուրքիայի ղեկավարության շրջանում կայացված որոշումը՝ միջուկային հնարավորություններ ստեղծել Անկարայի արտաքին քաղաքականության համար:

Չետելություն

Ներկայում Թուրքիայի կողմից իրականացվող ծավալապաշտական արտաքին քաղաքականության, այդ երկրում շարունակվող տնտեսական աճի պայմաններում Անկարայի համար կարելու հարց է դարձել տարածաշրջանում ու աշխարհում ազդեցության նոր լծակներ ձեռք բերելու հարցը: Այս իմաստով անգամ անսպասելի չէր թուրքական ղեկավարության որոշումը՝ նման արագ տեմպերով եւ նման ծավալ-

ներով ձեռնամուխ լինել սեփական միջուկային կարողությունների ընդլայնմանը:

Նշվածը, իհարկե, չի նշանակում, թե Անկարայում քաղաքական որոշում է կայացվել միջուկային ռուսի ստեղծման առնչությամբ, քանի որ նման քայլը ներկայում կարող է Թուրքիայի համար լուրջ խնդիրներ ստեղծել միջազգային ասպարեզում:

Բայց մյուս կողմից, հաշվի առնելով.

- տարածաշրջանում Իսրայելի, Իրանի ու Սաուդյան Արաբիայի կողմից սեփական միջուկային կարողությունների շարունակաբար ընդլայնումը,

- Թուրքիայի նպատակը՝ ավելի ազդեցիկ դեր ստանձնել տարածաշրջանային ու միջազգային գործերում,

- Անկարայում ամրապնդվող այն միտքը, թե ՆԱՏՕ-ն չի կարող լինել թուրքական անվտանգության ապահովման 100% երաշխիք,

նշվածը պետք է որ նշանակի, թե Անկարայում քաղաքական որոշում է կայացվել ստեղծել այն բոլոր ռազմատեխնիկական, քաղաքական ու տնտեսական հնարավորությունները, որոնք կարող են անհրաժեշտ պահի թույլ տալ Թուրքիային դառնալ միջուկային տերություն:

¹ Չինաստանի նախագահի պաշտոնում Սի Ցզինպինը հոկտեմբերին կփոխարինի Չու Չինտաոյին:

² Ուշագրավ մեկ փաստ. 1998թ. հունիսից մինչև 2000թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում թուրքական կառավարությունն ութ անգամ հետաձգեց մրցույթի արդյունքների ամփոփումը, եւ ի վերջո հայտարարվեց, թե ծրագիրը փակվում է:

³ Թուրքիայում օգտագործվող բնական գազի մոտ 2/3-րդը ներմուծվում է Ռուսաստանից, իսկ մնացած շուրջ 1/3-րդն էլ՝ Իրանից:

**ԹՈՒՐՔԻԱ – ԵՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՈՒ ԿԻՊՐՈՍԻ ԽՆԴԻՐԸ
Հայկ Գաբրիելյան**

Դեռևս 2011 թվականի հուլիսի 19-ին՝ թուրքական զորքերի կողմից Կիպրոսի հյուսիսային հատված ներխուժելու 37-ամյակի նախօրեին, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիան կսառնեցնի ԵՄ-ի հետ հարաբերությունները, եթե կիպրական հարցը լուծում չստանա մինչև 2012 թվականի հուլիսի 1-ին Կիպրոսի կողմից ԵՄ նախագահության ստանձնումը. «Թող ոչ ոք մեզանից չակնկալի, որ ԵՄ նախագահության ստանձնման դեպքում մենք (Հարավային) Կիպրոսի հետ կնստենք սեղանի շուրջ: Մենք չենք ճանաչում Կիպրոս անունով պետություն, փոխարենը ճանաչում ենք Հարավային Կիպրոսի վարչակազմ ու Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետություն (ՀԿԹՀ): Մենք ԵՄ-ն չենք դիտարկում որպես Կիպրոսի հարցում գրուցակից, քանի որ նա փորձում է այդ խնդիրը թեքել իր կողմը: Մենք գտնում ենք, որ կիպրական հարցն ամբողջովին պետք է լուծվի ՄԱԿ հարթակում»:

2011 թվականի հոկտեմբերի 12-ին հրապարակվեց Թուրքիայի գծով ԵՄ ընդլայնման վերաբերյալ 14-րդ զեկույցը (1998 թվականից): Դրանում նշված էր, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության շուրջ անցկացված ավելի քան 1 տարվա բանակցություններում չի գրանցվել որևէ առաջընթաց (Կիպրոսի, ինչպես նաև Հայաստանի, Իսրայելի ու քրդերի հետ հարաբերությունների կարգավորում): Թուրքիայի՝ Եվրամիության հարցերով պետնախարար Ել գլխավոր բանագնաց Էգեմեն Բաղըշը, մեկնաբանելով այդ զեկույցը, այն անվանեց անընդունելի՝ ընդգծելով, որ Իսրայելն ու ԵՄ մի շարք շրջանակներ Կիպրոսի հարցը գործածում են որպես «տրոյական ձի», իսկ պաշտոնական Բրյուսելը միտումնավոր դիպչում է «իր սիրելի կիպրական կոշտուկին»՝ Թուրքիայի անդամակցությանը խոչընդոտելու համար:

Հոկտեմբերի 15-ին Էրդողանը կրկնեց ԵՄ-ին ուղղված իր սպառնալիքը, իսկ նոյեմբերի 22-ին Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը Մեծ Բրիտանիայում խիստ քննադատության ենթարկեց Կիպրոսին. «Շուտով այդ կիսապետությունը, այդ ոչ լիարժեք պետությունը ստանձնելու է ԵՄ նախագահությունը: Այն կլինի կիսանախագահ, որը

կգլխավորի «խղճուկ միություն»։ Դա հենց այն է, ինչ ես ասել եմ ԵՄ առաջնորդներին»։ Փաստորեն, Գյուլը ԵՄ-ն անվանեց «խղճուկ միություն»։

2011 թվականի դեկտեմբերի վերջին Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն հայտարարեց, որ Կիպրոսի հարցում Թուրքիայի դիրքորոշումը մնում է անփոփոխ. «Եթե մինչև 2012 թվականի հունիսի 30-ը որոշում ընդունվի, ապա դա կլինի իդեալական։ Թուրքիան ուրախ կլինի, որ ԵՄ նախագահությունը ստանձնի ողջ Կիպրոսը, եւ ոչ թե միայն կղզու հունական հատվածը։ Այդ դեպքում Թուրքիան կառուցողական երկխոսություն կվարի ԵՄ-ը նախագահող երկրի հետ»։

2012 թվականի հունվարի 11-ին Կիպրոս այցելած Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը Թուրքիային զգուշացրեց, որ առանց Կիպրոսի հետ հարաբերությունների կարգավորման եւ նավահանգիստների բացման, անհնար է ԵՄ-ին անդամակցելու վերաբերյալ նոր «բանակցային գլուխների»¹ բացումը։ Պետք է նշել, որ Թուրքիան երկար ժամանակ է, ինչ հրաժարվում է բացել իր նավահանգիստները Կիպրոսի (որպես ԵՄ անդամ երկրի) առջև՝ դա պատճառաբանելով նրանով, որ դրա համար պետք է վերացվի ՀԿԹՀ միջազգային շրջափակումը։

Փետրվարի 16-ին Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն մեկօրյա պաշտոնական այցով ժամանեց Կիպրոս, ուր հանդիպում ունեցավ նախագահ Դիմիտրիս Խրիստոֆիասի հետ, ինչը մեծ արձագանք գտավ Թուրքիայում։ Հանդիպման ժամանակ կողմերը քննարկեցին էներգետիկ (գազի հետախուզման ու արդյունահանման) ոլորտում երկու երկրների համագործակցության պոտենցիալը եւ Իսրայելից դեպի Կիպրոս գազատարի կառուցման հարցը (մարտի 12-ին Թուրքիայի էներգետիկայի նախարար Թաներ Յըլդըզը հայտարարեց, որ Թուրքիան թույլ չի տա, որ Իսրայելի եւ Կիպրոսի համատեղ արդյունահանած գազն իր տարածքով տեղափոխվի դեպի Եվրոպա)։

Սակայն թուրքական մամուլն ընդգծում էր, որ Նեթանյահուն եւ Խրիստոֆիասը ստորագրել են նաեւ ռազմական բնույթի համաձայնագիր, ըստ որի՝ Կիպրոսն Իսրայելի ռազմածովային ու ռազմաօդային ուժերին թույլ է տալիս օգտվել իր տարածքային ջրերից ու օդային տարածքից, ինչպես նաեւ Նեթանյահուն Կիպրոսում ռազմակայան ստեղծելու ցանկություն է հայտնել, ինչն անհրաժեշտ է վերջերս² կղզու ափերի մոտ հայտնաբերված նավթագազային պաշարների հետախուզման աշխատանքների անվտանգության ապահովման համար։ Հիշեցնենք, որ Բենիամին Նեթանյահուն Կիպրոս այցելած Իսրայելի առաջին վարչապետն է։

Ի դեպ, հունվարի սկզբին էլ Իսրայել էր այցելել Կիպրոսի պաշտպանության նախարար Դեմետրիոս Էլիադեսը, եւ կողմերը կնքել էին պաշտպանական ուժորտում երկու երկրների միջեւ համագործակցության ընդլայնման մասին համաձայնագիր, ինչն առնչվում է հատուկ ծառայությունների միջեւ տեղեկատվության փոխանակմանն ու գազային հանքավայրերի անվտանգության ապահովմանը:

Փետրվարի վերջերին Դիմիտրիոս Խրիստոֆիասը դիմեց ՄԱԿ գլխավոր քարտուղար Պան Գի Մունին, Եվրահանձնաժողովի նախագահ ժոզե Սանուել Բառոզուին, ԵՄ նախագահ Յերման վան Ռոմպեյին եւ ՄԱԿ Ան 5 մշտական անդամներին (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Չինաստան)՝ բողոքելով Թուրքիայի կողմից Միջերկրական ծովի արեւելյան մասում հետախուզական աշխատանքների իրականացման դեմ: Կիպրոսը նաեւ տվյալ հարցի շուրջ զգուշացրեց Թուրքիայի ԱԳՆ-ին: Դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Թուրքիան երկրորդ տենդերը հայտարարեց Կիպրոսի բացառապես տնտեսական գոտում գազի ու նավթի հետախուզման շուրջ:

Չարկ է նշել, որ 2011 թվականի սեպտեմբերի 21-ին Թուրքիան եւ ՅԿԹՅ-ը Նյու Յորքում գաղտնի համաձայնագիր էին ստորագրել, որով նախատեսվում էր հորատման աշխատանքներ իրականացնել կղզու հյուսիսարեւելյան ծովափնյա հատվածում: Դրանից հետո ՅԿԹՅ կառավարությունը հետախուզական աշխատանքների արտոնագիր էր տրամադրել թուրքական TPAO պետական նավթային ընկերությանը: Բայց քանի որ ՅԿԹՅ-ը չի ճանաչել աշխարհի եւ ոչ մի պետություն, բացի Թուրքիայից, ուստի եւ ՅԿԹՅ-ն իրավունք չունի կղզու ցանկացած հատվածում եւ մերձակա տարածքային ջրերում բնական պաշարների հետախուզման կամ արդյունահանման վերաբերյալ ամեն տիպի արտոնագիր տրամադրել: Այս դրույթի խախտումը նշանակում է, որ Անկարան պարզապես թալանում է Կիպրոսի Յանրապետությունը՝ օգտվելով նրանից, որ ապօրինաբար վերահսկում է կղզու հյուսիսային մասը:

2012 թվականի մարտի 1-ին Էգեմեն Բաղըշը Լոնդոնում հայտարարեց, որ իրենք հուսով են, թե մինչեւ հուլիս կստեղծվի միավորված Կիպրոս, «Այդ դեպքում մենք հաճույքով կհամագործակցենք նրանց հետ: Սակայն եթե դա տեղի չունենա, ապա Թուրքիան այդ կես տարում կանտեսի Կիպրոսին եւ այդ ժամանակահատվածում բանակցություններ չի վարի նրա հետ: Մենք կապեր կպահպանենք Եվրահանձնաժողովի, Եվրախորհրդարանի ու ԵՄ անդամների հետ, սակայն նույնը չենք անի ԵՄ-ը նախագահողի (Կիպրոս) պարագայում»:

Իսկ մարտի 3-ին Բաղըշը ՉԿԹՅ-ում հրապարակվող «Քըբրըս» (Կիպրոս) թերթին տված հարցազրույցի ժամանակ հայտարարեց, որ եթե կիպրական հարցի շուրջ տարվող բանակցությունները շուտափույթ արդյունք չտան, ապա Թուրքիան չի բացառում ՉԿԹՅ բռնակցումը. «Անկարան աջակցում է կիպրական հարցի կարգավորման վերաբերյալ յուրաքանչյուր համաձայնագրի, եթե այն կայացվի ՄԱԿ հովանու ներքո միջկրոնական համայնքների ներկայացուցիչների միջև տարվող բանակցությունների արդյունքում: Բանակցությունները կարող են հանգեցնել կղզու վերամիավորմանը, ինչը, սակայն, կարող է տեղի ունենալ երկու առաջնորդների միջև պայմանավորվածության ձեռքբերման պարագայում: Պայմանավորվածության բացակայության դեպքում առաջանում է երկու իրավիճակ. ա) Կիպրոսում կստեղծվի երկու անկախ պետություն, բ) ՉԿԹՅ-ը կմիացվի Թուրքիային»: Ի դեպ, ՉԿԹՅ-ում համացանցով արված հարցումները ցույց են տվել, որ ՉԿԹՅ բնակիչների 51 տոկոսը կողմ է նրան, որ ՉԿԹՅ-ը դառնա Թուրքիայի 82-րդ նահանգը:

Ներկայումս թուրքական մամուլն ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ եթե Կիպրոսը ստանձնի ԵՄ նախագահությունը, ապա դա կնշանակի, որ այն նույն ժամկետով ստանձնելու է նաև «Եվրոպական բանակ»-ի (ԵՄ խաղաղապահ եւ ոստիկանական ուժ) հրամանատարությունը: Այդ բանակը ներգրավված է ԵՄ ու ՆԱՏՕ տարբեր նախաձեռնություններում (օրինակ՝ Կոսովոյում ու Բոսնիայում), որոնց մասնակցում են նաև թուրք զինծառայողներն ու ոստիկանները: Այդ պատճառով էլ Թուրքիան սպառնում է Կիպրոսի կողմից ԵՄ նախագահությունը ստանձնելու դեպքում իր զինծառայողներին ու ոստիկաններին հետ կանչել «Եվրոպական բանակ»-ից, քանի որ չի ցանկանում, որ նրանք գտնվեն Կիպրոսի հրամանատարության ներքո:

* * *

2012 թվականի մարտի 1-ին Եվրախորհրդարանի արտաքին հարցերով կոմիտեն ընդունեց Թուրքիայի վերաբերյալ բանաձեւ (կողմ՝ 54, դեմ՝ 7, ձեռնպահ 2): Բանաձեւում նշված էր, որ ԵՄ-ը եւ Թուրքիան կշահեն իրենց առավել սերտ կապերից՝ հաշվի առնելով իրենց փոխադարձ կախվածությունը, ինչպես նաև Թուրքիայի տնտեսական պոտենցիալը³ եւ տարածաշրջանում նրա ռազմավարական դիրքը. Թուրքիան ԵՄ-ի համար ծառայում է կասպյան նավթի ու գազի փոխադրման էներգետիկ խոշոր միջանցք եւ մոտ է գտնվում նավթով ու գազով հարուստ Իրաքին:

Բանաձեւում Թուրքիային կոչ էր արվում լուծել Հայաստանի ու Կիպրոսի հետ առկա խնդիրները, ինչպես նաեւ քրդական հարցը: Բացի այդ, նշված էր, որ ԵՄ-ը կտրուկ աջակցում է Կիպրոսի վերամիավորման շուրջ բանակցությունների շարունակմանը եւ Թուրքիային խնդրում է սեփական զորքերը դուրս բերել Կիպրոսից ու պահպանել ՄԱԿ ԱԽ համապատասխան բանաձեւերը: Բանաձեւում ցավալի էր որակվել ԵՄ-ի հետ հարաբերությունները սառեցնելու վերաբերյալ Թուրքիայի հայտարարությունը: Բանաձեւում Թուրքիային կոչ էր արվում բարեփոխումներ իրագործել դատական համակարգում ու պաշտպանել քաղաքացիական ազատությունները, գտնել քրդական հարցի քաղաքական կարգավորումը, պայմաններ ստեղծել քրդերի քաղաքական, մշակութային ու սոցիալ-տնտեսական ինտեգրման համար, նվազեցնել 10 տոկոսանոց խորհրդարանական շենը: Բանաձեւում կարելուովում էր անցագրային ռեժիմի ազատականացման հարցը եւ թուրք գործարարների, գիտնականների, ուսանողների ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար ԵՄ մուտք գործելը: Պետք է նշել, որ Թուրքիան ԵՄ անդամակցության միակ թեկնածու երկիրն է, որի հետ չի ազատականացվել անցագրային ռեժիմը:

Մարտի 20-ին Եվրախորհրդարանի նախագահ Մարտին Շուլցը⁴ Deutsche Welle-ին տված հարցազրույցի ժամանակ հայտարարեց, որ Թուրքիան հետքայլ է կատարել բարեփոխումների իրագործման հարցում. «ԵՄ-ի եւ Թուրքիայի միջեւ առկա են մեծ խնդիրներ, որոնք անհնար են դարձնում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը: Նախորդ տարիներին Թուրքիան ավելի մեծ ջանքեր է գործադրել ԵՄ չափորոշիչներին համապատասխանելու ուղղությամբ: Վարչապետ Էրդողանի գլխավորած Արդարություն եւ զարգացում կուսակցության (ԱԶԿ) կառավարման առաջին շրջանում (2002–2007) Թուրքիայում իրականացվեցին մի շարք ժողովրդավարական բարեփոխումներ: Սակայն ԱԶԿ կառավարման երկրորդ շրջանում (2007–2011) Թուրքիան հետքայլ կատարեց բարեփոխումների իրագործման գործընթացում, ինչն անհանգստացրեց մեզ: Մենք հետեւում ենք Թուրքիայում նոր Սահմանադրության մշակման ու ընդունման շուրջ ծավալված քննարկումներին եւ հուսով ենք, որ նոր Սահմանադրությունը կբարելավի իրավիճակը մի շարք ոլորտներում, ինչպիսիք են մարդու իրավունքների խախտումը, անարդար դատավճիռների կայացումը, մամուլի ազատության սահմանափակումը»:

Նույն օրը Եվրախորհրդարանի հոլանդացի պատգամավոր Բարի Մադլեները, Բրյուսելում խոսելով ԵՄ–Թուրքիա փոխհարաբերություն-

ներից, հայտարարեց, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցելը պարզապես թուրքական երազ է. «Վերջերս (փետրվարի 23-24) Ստամբուլում տեղի ունեցավ Թուրքիա–ԵՄ համատեղ խորհրդարանական հանձնաժողովի 68-րդ նիստը: Չնայած դրան՝ Թուրքիան դեռ ԵՄ-ի անդամ չէ: Եթե անցկացվի եւս 100 նմանատիպ նիստ, միեւնոյն է՝ Թուրքիան դարձյալ չի կարողանալու անդամակցել ԵՄ-ին: Թուրքիան չի կարող դառնալ ԵՄ անդամ: Էգեմեն Բաղըշը չի խոսում Թուրքիայի իրողություններից: Թող Բաղըշը բացատրի, թե ինչու են Թուրքիայում ծաղրանկարչին ձերբակալում ծաղրանկարի համար, թե ինչու են լրագրողներին ձերբակալում իրենց մտքերի համար, թե ինչու են մարդկանց ձերբակալում գրած գրքերի համար: Մինչդեռ Բաղըշը զբաղված է շուռ անելով: Միակ իրողությունն այն է, որ Թուրքիան չի կարող անդամակցել ԵՄ-ին»: Հիշեցնենք, որ փետրվարի վերջին էլ թուրքական Hurriyet թերթին տված հարցազրույցի ժամանակ Սադլեները հայտարարել էր, որ Թուրքիան տեղ չունի ԵՄ-ում եւ որ պետք է խելագար լինել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը ցանկանալու համար:

Այսպիսով, ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հեռանկարը բավական մշուշոտ է, իսկ հիմնական խոչընդոտներից մեկը շարունակում է մնալ կիպրական հարցը: Ներկայումս Անկարան արհեստականորեն փորձում է արագացնել կիպրական հարցի լուծումը՝ այդ առումով օգտագործելով ամռանը Կիպրոսի կողմից ԵՄ նախագահության ստանձնման գործունը, սակայն նրա սպառնալիքները չեն ներգործում ԵՄ-ի վրա: Մյուս կողմից էլ, հազիվ թե Թուրքիան ինքն էլ հավատում է, որ մոտ չորս տասնամյակ չկարգավորված այդ խնդիրը կարող է կարգավորվել մինչեւ հուլիս: Բացի այդ, վերջին շրջանում աշխարհը բավական վարժվել է թուրքական կողմի սպառնալիքներին, որոնք հիմնականում հասցեագրվել են Իսրայելին ու Կիպրոսին:

¹ Ներկայիս դրությամբ 35 «բանակցային գլուխների» համաձայնեցումից Թուրքիային հաջողվել է ավարտին հասցնել միայն 1-ը, 12-ի շուրջ բանակցությունները շարունակվում են, իսկ 13-ը գտնվում են սառեցված վիճակում, որոնցից 8-ը բաժին է ընկնում Կիպրոսին, 5-ը՝ Ֆրանսիային:

² 2011 թվականի դեկտեմբերի վերջին ամերիկյան Noble Energy ընկերությունը, որը սեպտեմբերից հորատումներ է անցկացնում կիպրական շելֆում, հայտնաբերեց գազային խոշոր հանքավայր, որի պաշարները նախնական տվյալներով կազմում են 140-230 միլիարդ խորանարդ մետր:

³ 2011 թվականին ԵՄ-ի եւ Թուրքիայի միջեւ ապրանքաշրջանառության ծավալը գերազանցել է 120 միլիարդ եվրոյի սահմանագիծը (թուրքական արտահանումը կազմել է 47.6 միլիարդ դոլար, իսկ ներկրումը՝ 72.7 միլիարդ դոլար):

⁴ Փետրվարի 8-ին Սարտին Շուլցը Բրյուսելում էգեմեն Բաղըշի հետ համատեղ մամլո ասուլիսի ժամանակ անդրադարձավ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին. «Թուրքիան պետք է առերեսվի սեփական պատմության հետ եւ թույլ տա անցկացնել անկախ հետազոտության: Եթե այդ հետազոտության արդյունքներով պարզվի, որ տեղի է ունեցել ցեղասպանություն, ապա Թուրքիան պետք է ճանաչի այն: Առաջին հերթին դա պետք է ճանաչի հենց Թուրքիան: Որպես գերմանացի՝ ես ծանոթ եմ իմ երկրի պատմությանը: Ես հպարտ եմ, որ Գերմանիան արդեն մոտ 60 տարի է, ինչ ճանաչում է իր պատմությունը (Յոլոքոսթ)՝ դրանով իսկ հետագա սերունդներին ազատելով անցյալում տեղի ունեցածի համար պատասխանատվությունից ու մեղքի զգացումից: Սեփական անցյալի հարցում բաց լինելը լավագույն ուղին է դեպի ապագա»:

**ԾՈՑԻ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ «ԱՐԱՔԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ»
Սուրեն Մանուկյան**

«Արաքական գարունն» արմատապես փոխեց Մերձավոր Արևելքի պատկերը՝ առաջ բերելով որոշակի տեղաշարժեր ուժերի տարածաշրջանային փոխդասավորվածության մեջ:

Ներկայում առաջին պլան են դուրս գալիս Ծոցի երկու միապետությունները՝ Սաուդյան Արաբիան ու Կատարը, որոնք ստեղծված իրավիճակը փորձում են առավելագույնս օգտագործել սեփական շահերը բավարարելու համար: Նրանց ներգրավվածությունը զգալի էր եգիպտական, լիբիական իրադարձություններում, իսկ Սիրիայում այսօր ընթացող քաղաքացիական պատերազմում Կատարի ու Սաուդյան Արաբիայի դերակատարությունը շատ դեպքերում վճռորոշ է:

Երկու միապետություններն այսօր լուծում են մի շարք խնդիրներ.

ա) հարեւան երկրներում հակաիշխանական ուժերին ցուցաբերվող օգնությունը որոշակիորեն փոքրացնում է սեփական երկրում նմանօրինակ շարժման առաջացման հավանականությունը կամ լեգիտիմացնում է ապագայում դրա դեմ բռնություն կիրառելու հնարավորությունը (ինչպես, օրինակ, 2011թ. գարնանը սաուդյան ուժերը ճնշեցին Բահրեյնում բռնված խռովությունները),

բ) արաքական գարունը իշխանության է բերում սուենի ծայրահեղական քաղաքական հոսանքներին, որոնք ավանդաբար Սաուդյան Արաբիան եւ Կատարը դիտարկել են իբրեւ դաշնակիցներ: Սրանով ազդարարվում է երկու պետությունների պաշտոնական գաղափարախոսության՝ վահաբականության հաղթարշավը,

գ) միաժամանակ երկու պետություններն այս կերպ փորձում են տեղավորվել դաշնակից ԱՄՆ քաղաքականության ուղեծրում, որը դիտարկում է տեղի ունեցող իրադարձություններն իբրեւ տարածաշրջանն ավելի արեւմտականացնելու, ինչպես նաեւ Մերձավոր Արևելքում Իրանի ազդեցությունը նվազեցնելու հնարավորություն,

դ) Իրանի հնարավոր նահանջի պայմաններում էր Ռիադն ու Դոհան անթաքույց հավակնություններ են ներկայացնում Մերձավոր Արևելքում առաջնորդի թափուր տեղի համար:

Հավակնություններ եւ հնարավորություններ

Տարածաշրջանային տերություն դառնալու հավակնությունները երկու պետությունները հիմնավորում են լուրջ ներուժով:

Էներգակիրների արդյունահանումը նրանց հսկայական եկամուտներ է ապահովում: Սաուդյան Արաբիան տիրապետում է համաշխարհային բացահայտված նավթի 25%-ին: Սա թույլ է տալիս երկրին մեծ դերակատարում ունենալ նավթի համաշխարհային գնագոյացման մեջ եւ գերիշխել Նավթարդյունահանող երկրների կազմակերպությունում (ՕՊԵԿ-ում): Կատարի եկամուտները բնական գազի հսկայական պաշարների շահագործումից եւ հիմնականում հեղուկ բնական գազի (ՀԲԳ) արտահանումից են գոյանում: 54 հատուկ նավերի միջոցով ՀԲԳ-ը հասցվում է աշխարհի ցանկացած անկյուն՝ խուսափելով տարանցող երկրներից կախվածությունից: Ամբողջ աշխարհում ՀԲԳ ընդունման տերմինալներ կառուցելով՝ Կատարը ներխուժում է նույնիսկ հիմնական մրցակիցների ավանդական ազդեցության գոտիներ, ինչպիսին են, օրինակ, Լեհաստանը կամ Իտալիան ռուսական «Գազպրոմի» համար: Առավել եւս, որ Կատարը գազը դեմպինգային գներով վաճառելու հնարավորություն ունի:

Տարածաշրջանային գերիշխանության հավակնություններ Սաուդյան Արաբիան սկսել է դրսևորել դեռ 1960-ականներից, երբ հակադրվեց Նասերի գլխավորությամբ արաբական ազգայնական, աշխարհիկ պետություններին ու խորհրդամետ սոցիալիստական վարչակարգերին: Սաուդյան Արաբիան ընդունում էր այդ երկրներից վտարված իսլամիստական գործիչներին, որոնք հետագայում, հայրենիք վերադառնալուց հետո, դառնում էին իր ազդեցության գործակալները: Բացի այդ, սաուդական իսլամական հիմնադրամները հսկայածավալ ֆինանսական հոսքեր էին ապահովում՝ արաբական պետություններն ու ամբողջ աշխարհի իսլամական համայնքները կրոնական գրականությամբ հեղեղելու եւ մզկիթներ կառուցելու նպատակով: 1969թ. Սաուդյան Արաբիան նախաձեռնեց Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, որը կոչված էր համախմբել իր հովանու ներքո աշխարհի բոլոր իսլամադավաններին: Գերիշխանության իր հավակնություններն էր Ռիադը հիմնավորում էր առաջին հերթին իսլամի երկու գլխավոր սրբավայրերի՝ Մեքքա ու Մեդինա քաղաքների տիրապետությամբ, որոնք յուրաքանչյուր տարի միլիոնավոր ուխտավորների համար բաղձալի

վայր են դառնում: Սակայն 1990թ. իրաք-քուվեյթյան պատերազմի ընթացքում Սուրբ հողի վրա ամերիկյան զինվորներին տեղակայելով՝ սաուդյան առաջնորդները որոշակիորեն վարկաբեկվեցին ուղղահավատ մուսուլմանների աչքում:

Կատարի հավակնություններն ավելի փոքր պատմություն ունեն: 1995թ. թագավորությունում հեղաշրջման արդյունքում գահին բարձրացած չափազանց հավակնոտ Չամադ բեն Խալիֆա ալ Տամին սկսեց իրականացնել Արաբական թերակղզու այդ թզուկ պետությունը տարածաշրջանի հզորներից մեկը դարձնելու իր երազանքը: Դրան հասնելու հիմնական գործիքներ ընտրվեցին դիվանագիտությունը եւ տեղեկատվական ակտիվությունը: Այսպես, Դոհան սկսեց ներգրավվել միջնորդական բազմաթիվ գործընթացներում. դարձրեց իսնդիր, Ռաֆիկ Չարիրիի սպանությունից հետո ներլիբանանյան տարածայնություններ, միջպաղեստինյան հակասություններ, միջեմենյան լարվածություն, Էրիթրեա–Ջիբութի վեճ եւ այլն: Թեեւ նշված ոչ մի խնդրի միջնորդություն չի կարելի համարել հաջողված, սակայն միայն մասնակցությունը եւ ֆինանսավորումը բարձրացրին երկրի հեղինակությունը եւ թույլ տվեցին Կատարին ձեռք բերել դիվանագիտական ինքնավստահություն:

Շատ կարեւոր ռեսուրս դարձավ նաեւ «Ալ-Ջազիրա» հեռուստաընկերությունը: 1996թ. BBC-ի արաբական խմբագրության նախկին աշխատակիցների թիւը ստեղծեց լավագույն հեռուստատեսությունը տարածաշրջանում: Այսօր այն հսկայական ազդեցություն ունի արաբական փողոցի վրա եւ դարձել է արաբների տրամադրությունների կառավարման յուրօրինակ կենտրոն: Կատարի հավակնությունների վկայություն դարձավ նաեւ 2022թ. ֆուտբոլի աշխարհի առաջնությունն այդ երկրում անցկացնելու իրավունքը:

Երկու միապետությունները ռազմավարական հարաբերություններ ունեն ԱՄՆ-ի հետ, ինչը նույնպես բավական մեծ ներուժ է տալիս նրանց: 2001թ. սեպտեմբերի 11-ի դեպքերի հետաքննություննից հետո, երբ բացահայտվեց ահաբեկչության «սաուդյան» եւ «կատարյան» հետքը, միայն անվերապահ հավատարմության գնով հնարավոր եղավ խուսափել ամերիկյան պատժից: Սաուդյան Արաբիան փաստացի սպասարկում է ամերիկյան շահերը տարածաշրջանային կազմակերպություններում, իսկ Կատարում գտնվում է տարածաշրջանում ԱՄՆ ՌՕՈՒ խոշորագույն ալ-Ուդեյդ ռազմակայանը՝ մոտ 4 հազար ԱՄՆ զինվորներով: Այն Իրաքի ու Բահրեյնի հետ միասին ամերիկյան ռազմական

ներկայության ամենավճռական արտահայտությունն է Պարսից ծոցում: Այս ռազմականայանը դարձավ 2003թ. Իրաք ներխուժման իրականացման հենակետ:

Ծոցի միապետությունների հաղթարշավը

Թունիսյան հեղափոխության արդյունքում Սաուդյան Արաբիայում հանգրվան գտավ Թունիսի պաշտոնաձև նախագահ բեն Ալի, իսկ նրա շրջապատը հիմնականում տեղակայվեց Կատարում:

Եգիպտոսում դեպքերի զարգացումը ցույց տվեց, որ հեղափոխական ալիքը շատ հզոր է եւ կարող է ծածկել ամբողջ Մերձավոր Արեւելքը: Այս պարագայում միապետությունները նախընտրեցին մասնակցել գործընթացին՝ կանխելու համար նրա տարածումը սեփական երկրում: Եգիպտոսի նախագահ Մուբարաքի հեռացումն իշխանությունից կարող էր իշխանության բերել ծայրահեղ իսլամական ուժերի, ինչը նպաստավոր կլիներ երկու վահաբական միապետությունների ազդեցության ու դերակատարության աճի տեսանկյունից: Եգիպտոսը նաեւ ժամանակավորապես դուրս էր մնում տարածաշրջանային առաջնորդության համար պայքարից: Եգիպտոսում ընթացող դեպքերը հետեւողական եւ նպատակաուղղված կերպով լուսաբանվում էին «Ալ-Չազիրա» հեռուստատեսության կողմից: Ամեն ինչ արվում էր Մուբարաքի դեմ բարձրացած խռովության երկարաժամկետ ու թեժ բնույթն ապահովելու համար: Այն պահին, երբ հեղափոխական ալիքը սպառնում էր, կատարվում էր նոր ներարկում «Ալ-Չազիրայի» միջոցով, որը փողոց էր դուրս բերում տասնյակ հազարավոր եգիպտացիների: Տեղեկատվական այս արշավն ուղեկցում էր նաեւ լիբիական դեպքերը: Արյունալի տեսարանները Քադաֆիի զորքերի կողմից իրականացվող «դաժանությունների» վերաբերյալ հանրային կարծիք ձեւավորեցին, որը ստիպեց տարբեր առյաններում բանաձեւեր ընդունել եւ օրինականացնել օտարերկրյա ներխուժումը Լիբիա:

Այս ամենն ուղեկցվում էր դիվանագիտական ճնշմամբ: Հատկապես տպավորիչ էր աշխատանքն Արաբական պետությունների լիգայում (ԱՊԼ), որը շատ կարճ ժամանակ անց, փաստորեն, հայտնվեց Կատարի ու Սաուդյան Արաբիայի վերահսկողության տակ: Նրանց ճնշման ներքո ընդունվեցին բանաձեւեր Քադաֆիին իշխանությունից հեռացնելու անհրաժեշտության մասին, իսկ հետագայում՝ Սիրիան ԱՊԼ-ից վտարելու վերաբերյալ: ԱՊԼ դիրքորոշումը շատ կարեւոր էր աշխարհի

տարբեր մայրաքաղաքներում ՄԱԿ ԱԽ բանաձեւի ընդունման վերաբերյալ աշխատանք տանելու առումով: Այսպես, օրինակ, այն ազդեց ՌԴ ու Չինաստանի դիրքորոշման վրա Լիբիայի նկատմամբ ընդունվող բանաձեւի պարագայում, որն էլ իր հերթին դարձավ հարմար քող՝ Կատարի կողմից ոգեշնչվող օտարերկրյա ռազմական ներխուժման համար: Այս ամբողջ ընթացքում չէր դադարում սաուդյան եւ կատարյան ֆինանսական եւ ռազմական օգնությունն ապստամբներին:

Լիբիական դեպքերի ռազմական հատվածում Կատարն ամենակատիվն էր: Կատարյան հատուկչոկատայինները ՆԱՏՕ եւ հակաքաղաֆիական ուժերի միջեւ կապավորի դեր էին ստանձնել: Բացի այդ, շրջանցելով ՄԱԿ բոլոր արգելքները, Դոհան սկսեց գնել ու վաճառել լիբիական նավթը՝ ապստամբներին օգնելու նպատակով: Կատար էին ժամանում լիբիական ցեղային առաջնորդներ, որոնք մեծ «պարզեւավճարների» դիմաց համաձայնում էին դավաճանել Քադաֆիին: Կատարյան դիվանագետները չդադարող աշխատանք էին տանում ՆԱՏՕ երկրների մայրաքաղաքներում: Ի վերջո, ջանքերը պսակվեցին հաջողությամբ, եւ Տրիպոլիում իշխանության եկան հենց Կատարի դրածոները: Նույնը կրկնվեց Թունիսում, ուր իշխանության եկան արմատական իսլամական «Ան-Յահդա» շարժումը եւ Եգիպտոսում, որտեղ խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարան «Մուսուլման եղբայրներ» եւ սալաֆիական «Նուռ» կազմակերպությունները, որոնք բացահայտ կերպով ֆինանսական եւ բարոյական օգնություն են ստանում Կատարից եւ Սաուդյան Արաբիայից:

Սիրիական պատնեշը եւ դժվարությունները

Սիրիայում, սակայն, դեպքերի զարգացումն այլ ուղիով շարժվեց: Քանի դեռ չէին ավարտվել լիբիական գործերը, Սիրիան հիմնականում սաուդյան ուշադրության կենտրոնում էր: Երկու պետությունները վաղուց խոր հակասություններ ունեին: Էր Ռիադը մեղադրում էր Դամասկոսին տարածաշրջանում Իրանի անվերապահ աջակցության մեջ, ինչպես նաեւ չէր կարող ներել սաուդցիների մեծ բարեկամ Ռ.Յարիրիի սպանությունը, որում մեղադրում էր սիրիական իշխանություններին: Կատարն, ընդհակառակը, Դամասկոսի հետ մշտապես ջերմ հարաբերություններ ուներ: Երկրի ղեկավարները մտերիմ էին ընտանիքներով, իսկ կատարյան ներդրումները սիրիական տնտեսությունում հասնում էին 8,5 մլրդ դոլարի:

Բայց հետզհետե տրամադրությունները փոխվեցին: Արմատական մուսուլմանական վերնախավը, մեծ հեղինակություն վայելող ու թագավորական ընտանիքի վրա զգալի ազդեցություն ունեցող Իսլամական աստվածաբանների (ուլեմների) համաշխարհային խորհրդի նախագահ եւ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության գլխավոր գաղափարախոս շեյխ Յուսուֆ ալ-Կարավավիի գլխավորությամբ, պահանջում էր նույն դիրքորոշումն ընդունել, ինչ եղել է Լիբիայի դեպքում: Կատարն ու Սաուդյան Արաբիան սկսեցին զենք մատակարարել ընդդիմադիրներին: Հիմնականում դա Ալբանիայում կուտակված 120 հազար տոննա չինական ու հարավսլավական զինամթերքն է, որն ըստ ՆԱՏՕ պլանների՝ ենթակա էր ոչնչացման մոտակա չորս տարիների ընթացքում: Այդ զենքի մեծ մասը հայտնվեց լիբիական գրոհայինների ձեռքում, իսկ հետո ուղարկվեց Թուրքիայում ստեղծված Ազատ Սիրիական բանակի ռազմակայաններ:

Միլիոնավոր դոլարների հասնող սաուդյան անվերջ ֆինանսական հոսքն այն գրավականն էր, որը թույլ էր տալիս ամիսներ շարունակ լարված պահել իրավիճակը Սիրիայում: Ջուզահեռ, «Ալ-Ջազիրան» իսկական ապատեղեկատվական պատերազմ է տանում՝ կանգ չառնելով նույնիսկ անաչառ լրատվամիջոցի համբավը կորցնելու վտանգի առաջ:

Թեեւ ԱՊԼ-ում հաջողվեց համապատասխան բանաձեւ անցկացնել եւ Սիրիա դիտորդական խումբ ուղարկել, սակայն լիբիական սցենարը կրկնել չստացվեց: Նախ Ռուսաստանն ու Չինաստանը թույլ չտվեցին ՄԱԿ ԱԽ-ում ընդունել բանաձեւ Սիրիայի դեմ: Բացի այդ, սիրիական ընդդիմադիրներին չհաջողվեց ամրանալ երկրի մի հատվածում, ստեղծել բուֆերային գոտի, որը կդառնար իշխանությունների դեմ պայքարի հենարան, ինչպես դա արվեց Բենդազիում: Իսկ Օոցի միապետությունների ջանքերով Սիրիա ուղարկված փաստահավաք խմբի եզրակացությունը բոլորովին չէր համապատասխանում սպասելիքներին: Այն արձանագրել էր, որ երկրում գործում են գրոհայինների խմբեր, որոնց մեղքն իրավիճակի սրման մեջ զգալի է:

Միաժամանակ, մի շարք եվրոպական ու արաբական պետություններ սկսեցին նեղվել սաուդ-կատարյան ակտիվությունից, ինչպես նաեւ նրանց գործելաոճից հետպատերազմյան Լիբիայում: Արեւմուտքը չէր ցանկանում նույն արտոնությունները տալ միապետական գույզին այժմ նաեւ Սիրիայում:

Այս պայմաններում սիրիական իշխանությունները կոտրեցին քիչ թե շատ կազմակերպված դիմադրությունը եւ սկսեցին երկիրը մաքրել

գրոհայիններից: Տվյալ պարագայում վերջիններիս ամենահավանական մարտավարությունն ահաբեկչական գործողությունների իրականացումն է դառնում՝ երկրում իրավիճակն ապակայունացնելու եւ արտաքին օգնություն ապահովելու ակնկալիքով: Ծոցի միապետություններն ակտիվորեն սրան աջակցելու են մարդկային եւ ռազմական օգնության տեսքով: Սիրիական ընդդիմությունը, որը մինչեւ վերջին պահը դեմ էր հանդես գալիս ներխուժման հնարավորությանը, հասկանալով, որ այն շատ վատ կընկալվի Սիրիայի ազգաբնակչության շրջանում, այժմ Սիրիական ազգային խորհրդի առաջնորդ Բ.Գալունի շուրթերով հանդես է գալիս օտարերկրյա ներխուժման կոչով: Դրա անհրաժեշտության մասին արդեն մոտ կես տարի մշտապես կրկնում են Կատարն ու Սաուդյան Արաբիան:

Սակայն ներկա փուլում նման հավանականությունը շատ փոքր է, քանզի ԱՊԼ երկրները եւ միջազգային խաղացողները փոխհամաձայնության չեն կարողանում գալ: Օրինակ, Մարոկոն, որը օտարերկրյա ներխուժման ջերմ կողմնակիցն էր մի քանի ամիս առաջ, հիմա կտրականապես մերժում է նման զարգացման հնարավորությունը: ԱՄՆ պետքարտուղար Յ.Բլինքոնը շեշտում է օգնության բացառապես «բարոյական ու դիվանագիտական» ճանապարհը: Սա առաջացրեց Սաուդյան կողմի վրդովմունքը, ինչն արտահայտվեց «Սիրիայի բարեկամների հանդիպումը» լքելով:

Միաժամանակ, կան խնդիրներ բուն Ծոցի երկրներում: Սաուդյան Արաբիայի արեւելյան նահանգներում 2011թ. մի քանի շիական ապստամբություններ բռնկվեցին, որոնք դժվարությամբ հաջողվեց ճնշել: Կատարը դեռ կարողանում է պահել ընդվզումները երկրի ներսում՝ կտրուկ բարձրացնելով աշխատավարձերը: Սակայն «Արաբական գարնան» տրամաբանությունը կարող է ոտքի հանել նաեւ այս երկրների բնակիչներին: Առավել եւս, որ «Արաբական գարնան» ամբողջ ընթացքում իրենց ժողովրդավարության ու մարդու իրավունքների պաշտպան ներկայացնող Ծոցի միապետություններում դրանք իսպառ բացակայում են: Այս երկրներում լարված են նաեւ ներիշխանական հարաբերությունները: Կատարում պայքար է ընթանում էմիր Յամադի շրջապատում երկու ազդեցիկ խմբավորումների՝ ԱԳ նախարար Յամադ բեն Ջասեմի եւ նախկին փոխվարչապետ եւ էներգետիկայի նախարար ալ-Ատտայայի միջեւ, որի արտահայտություններից եղավ 2011թ. մարտին էմիրի դեմ անհաջող մահափորձը: Սաուդյան Արաբիայի թագավորը ծեր է եւ հիվանդ, իսկ գահաժառանգության հարցը միանշանակ չէ:

Անկանխատեսելի է Իրանի շուրջ լարվող իրավիճակը: Հորմուզի նեղուցի գործունեության հնարավոր խափանումը կարող է ծանր հետեւանքներ ունենալ այս երկրների տնտեսության վրա, քանի որ հենց այդ ճանապարհով է արտահանվում նրանց էներգառեսուրսների մեծ մասը: Իրավիճակի հետագա սրման դեպքում երկու թագավորությունները կարող են դառնալ իրանական պատասխան հարվածի թիրախ:

Բացի այդ, կան հակասություններ հենց Կատարի եւ Սաուդյան Արաբիայի միջեւ: Վերջինս այդքան էլ ոգեւորված չէ իր փոքր հարեւանի ակտիվությունից, մանավանդ Սիրիայում, որը համարում է իր ուժերի ներդրման բացառիկ տիրույթ:

ՊԱՅՔԱՐ ՄՈԼՈՐԱԿԻ ՄՆԱՑԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՍԱՐ Մայքլ Քլեյփ

Աշխարհը սրընթաց կերպով մոտենում է նրան, որը «Մրցավազք մնացած ռեսուրսների համար» գրքի հեղինակ Մայքլ Քլեյփն անվանում է «բնական ռեսուրսների սպառման ճգնաժամ»: Այս նոր գրքում հեղինակը նշում է, որ նավթի, ածխի, գազի, մետաղների, հանքանյութերի եւ հազվագյուտ տարրերի, անգամ ջրի ու սննդի դյուրամատչելի պաշարներն արագ անհետանում են՝ կառավարություններին ու կորպորացիաներին հարկադրելով խելահեղ մրցավազքի մեջ մտնել մնացածի համար: Իսկ այն, ինչ մնացել է, այդ ամենից բացի, նաեւ դժվար է արդյունահանել. այն գտնվում է արկտիկական սառույցների, օվկիանոսային խոր ջրերի տակ, բիտումային ավազների ու թերթաքարերի մեջ, ռազմական հակամարտությունների գոտում, օրինակ՝ Աֆղանստանում: Ռեսուրսներին հասնելը դառնում է ավելի ու ավելի վտանգավոր՝ ինչպես բնապահպանական, այնպես էլ քաղաքական տեսանկյունից. չէ՞ որ տարբեր երկրներ ավելի հաճախ են ստիպված լինելու վիճաբանել, թե ում ինչ է հասնում:

Ստորել ներկայացնում ենք ամերիկյան «**Rolling Stone**» հանդեսին Մայքլ Քլեյփի տված հարցազրույցը:

Չարդ – Դուք ասում եք, որ մեզ սպառնում է «ռեսուրսների վերջանալու ճգնաժամը»: Մենք արդեն նրա մեջ ենք: Այդ անհրաժեշտ ռեսուրսներն այլեւս անհետանո՞ւմ են:

Պատ.– Նրանք չեն անհետանում, սակայն նրանցից շատերն արագ նվազում եւ սպառվում են: Փաստորեն, բոլոր դյուրամատչելի ռեսուրսներն արդեն վերջացել են, ուստի մեզանից պահանջվելու է դրանք փոխարինել նոր աղբյուրներով:

Չարդ – Եթե Ձեզ ճիշտ ենք հասկանում, ապա կոնֆլիկտը, հիմնականում, անխուսափելի է, եթե երկրները մրցակցում են մնացածի վրա վերահսկողության համար: Այն արդեն տեղի՞ է ունենում:

Պատ.– Արդեն մի քանի լարված պահեր եղել են: Ռուսաստանն ու Նորվեգիան Բերինգի ծոցում իրենց «նկանները ցուցադրեցին», բայց առայժմ նրանք այդ խնդիրը լուծել են: Այժմ մեծ լարվածություն է Արեւելա-

Չինական եւ Յարավ-Չինական ծովերում, ուր նավթի ու գազի հանքավայրերի շեֆային շահագործման վերաբերյալ վեճ է գնում. մենք հետեւում էինք ճապոնիայի ու Չինաստանի, ինչպես նաեւ Չինաստանի, Վիետնամի ու Ֆիլիպինների միջեւ ծովային բախումներին: Իսկ այժմ նախագահ Օբաման հայտարարել է, որ ԱՄՆ-ը գործուն մասնակցություն է ունենալու այս տարածաշրջանում:

Չարք – Նաեւ Արկտիկայում կարող է իրադրությունը լարվել:

Պատ.– Մինչեւ վերջերս Արկտիկայով ոչ ոք չէր զբաղվում, սակայն այժմ այն ընկալվում է որպես նավթի ու գազի խոստումնալից աղբյուր, ուստի այդ վայրն անսպասելիորեն դարձել է արժեքավոր տիրույթ: Ազգային սահմանները, որոնց մասին առաջ ոչ ոք չէր մտահոգվում, հանկարծ դարձել են անչափ կարեւոր: Ուշագրավ է, որ դա տեղի է ունենում մասնավորապես այն պատճառով, որ կլիմայի փոփոխության արդյունքում սառույցի շերտը բարակում է, որն իր հերթին թույլ է տալիս երկարացնել հորատման շրջանը: Ռուսաստանը հայտարարում է արկտիկական տարածաշրջանի գրեթե կեսի վրա իր իրավունքների մասին՝ ասելով, որ այն իր ազգային տարածքն է, եւ փորձում է, որքան հնարավոր է, այդ տարածաշրջանի էլ ավելի մեծ մասի վրա վերահսկողություն սահմանել: Ռուսաստանի նորընտիր նախագահ Պուտինը հայտարարել է, որ մոտակա տարիներին պատրաստվում է ուժեղացնել ռուսական ռազմական ներկայությունն Արկտիկայում, որպեսզի պաշտպանի տարածաշրջանը ցանկացած օտար հավակնությունից: Սակայն մյուս երկրները եւս ունեն իրենց պահանջները. դրանք ունեն Նորվեգիան, Կանադան, Գրենլանդիան, որը Դանիայի պրոտեկտորատն է, եւ ԱՄՆ-ը: Հետեւաբար, կարող է սկսվել շատ ինտենսիվ աշխարհաքաղաքական մրցակցություն այդ ապագա ռեսուրսների վրա վերահսկողության համար:

Չարք – Անշուշտ, այդ դժվարամատչելի հանածոների արդյունահանումը կապված է շրջակա միջավայրի համար վտանգների հետ:

Պատ.– Եթե նայենք հանքավայրերի ժամանակակից շահագործմանը՝ լինի խորքայա շահագործում Արկտիկայում, թե թերթաքարային գազ եւ նավթ, ապա հասկանալի է լինում, որ ներդրումներն ու արդյունահանման հետ կապված՝ շրջակա միջավայրի համար վտանգները հասել են աննախադեպ մակարդակի: Դա է ցույց տալիս հանքաշերտի հիդրավլիկ անջատման օրինակը, որի ժամանակ Յուսիս-արեւելքի խիտ բնակեցված շրջանների մոտ անջատվում է մեծ քանակությամբ

թունավոր թափոնաջուր: Կամ, օրինակ, շելֆային հորատումը: Մեքսիկական ծոցում British Petroleum ընկերության Deepwater Horizon հորատման հարթակի վրա աղետը ցույց տվեց, թե ինչով է այն հղի: Գրենլանդիայի ափերին սկսվում են նավթի որոնման համար հորատումները, ինչը հնարավոր է միայն սառույցի շերտի բարակելու դեպքում, սակայն դա կմեծացնի Գրենլանդիայի էկոլոգիան վնասելու վտանգը, որը բնակության չափազանց փխրուն միջավայր է անհետացման սպառնալիքի տակ գտնվող կենդանիների շատ տեսակների համար:

Չարդ – Եվ հասկանալի է, որ եթե ռեսուրսները դառնում են սահմանափակ, ապա ավելի ու ավելի են թանկանում:

Պատ.– Չենց այդպես: Վերցնենք կանադական բիտումային ավազը: Վիթխարի քանակությամբ էներգիա է պահանջվում հողի տակից այն արդյունահանելու եւ հեղուկի վերածելու համար, ուստի դա շահութաբեր կլինի սոսկ այն դեպքում, եթե նավթի բարելը 80-90 դոլարից ավելին արժենա: Ապագայում, երբ բիտումային ավազաքարերը սպառվեն, արկտիկական նավթի արդյունահանումն էլ ավելի կթանկանա: Այսինքն՝ մենք թեւակոխում ենք առավել թանկ նավթի դարաշրջան:

Չարդ – Ինչպե՞ս է այս պատմությանն առնչվում սննդամթերքը:

Պատ.– Սննդամթերքի արտադրությունը հսկայական քանակությամբ էներգիա է պահանջում, ինչպես նաեւ շատ պարարտանյութեր, պեստիցիդներ եւ հերբիցիդներ, որոնք նավթի ու բնական գազի ածանցյալներ են: Բացի այդ, դաշտերի ոռոգման համար պետք է շատ ջուր: Դրանք օրեցօր դառնում են ավելի հազվագյուտ ու թանկարժեք, եւ պարզ չէ, թե աշխարհը կարող է, արդյոք, մարդկանց տրամադրել առավել շատ սննդամթերք: Միանգամայն ճիշտ է, որ աղքատ ֆերմերները չեն կարող այդ ներդրումներն իրենց թույլ տալ, հետեւաբար, կմնան միայն հարուստ երկրների լավ ֆինանսավորվող կազմակերպությունները՝ սննդամթերքի արտադրության ինդուստրիայի այդ հարուստ կղզյակները:

Չարդ – Դուք գրում եք «տարածքի գրավման» ֆենոմենի մասին, երբ հարուստ ու զարգացած երկրներն աղքատներից վիթխարի հողակտորներ են գնում, հատկապես Աֆրիկայում: Ի՞նչ է դա:

Պատ.– Եզմարիտ է: Զինաստանը, Չնդկաստանը, Չարավ. Կորեան եւ նավթարտադրողները, օրինակ՝ Սաուդյան Արաբիան ու ԱՄԷ-ն, այն երկրներից են, որոնք Աֆրիկայում ֆերմերության համար խոշոր հողակտորներ են գնում, եւ ոչ թե նրա համար, որպեսզի կերակրեն

աֆրիկյան բնակչությանը, այլ սննդամթերքի արտադրության եւ այն տուն փոխադրելու: Նրանք մտահոգություն ունեն, որ ապագայում իրենց բնակչությանը կերակրելու համար սնունդը չի բավականացնի: Դա աշխարհում, որտեղ, ինչպես մարդիկ մտավախություն ունեն՝ պաշարները չեն բավականացնի, ռեսուրսների համար մրցավազքի եւս մեկ օրինակ է:

Հարց – Իսկ հազվագյուտ տարրերի վերաբերյալ՞:

Պատ.– Քիմիական տեսանկյունից՝ այդ խմբի մեջ մտնում է 17 տարր, եւ նրանք արդեն այժմ «բնապահպանական» տեխնոլոգիաների զարգացման մեջ հարաճուն դեր են խաղում: Նրանց կիրառմամբ արտադրում են բարձր արագությամբ մագնիսներ «Prius» մոդելի «Toyota» ավտոմեքենաների, հողմաղացների տուրբինների եւ արեւային վահանակների համար: Խնդիրն այն է, որ հազվագյուտ տարրերը հանքային խոշոր կուտակումներով չեն լինում: Նրանց պահանջարկը հսկայական է, իսկ առաջարկը՝ չափազանց սահմանափակ, արդյունահանումը մեծ գումարներ արժե եւ էկոլոգիապես վտանգավոր տեխնոլոգիա է ներկայացնում, քանզի մնացած տարրերից դրանց անջատումը պահանջում է թթուներ եւ այլ տարրեր:

1990-ական թվականներին ԱՄՆ-ում՝ Կալիֆորնիա եւ Նեբրասկա նահանգների սահմանին, արտադրվել է զգալի քանակությամբ հազվագյուտ մետաղ, սակայն ողջ արտադրությունն էկոլոգիային հասցվող վնասի պատճառով փակ էր: Ներկայումս առաջատար արտադրողը Չինաստանն է, եւ նա այն օգտագործում է իր «հաճախորդների» վրա ճնշում գործադրելու համար (օրինակ՝ ճապոնիայի):

Հարց – Եվ այսպես, ի՞նչ անել:

Պատ.– Մենք՝ մարդիկ, մեզ միշտ այնպես ենք պահել, որ կարծես էներգիայի նոր աղբյուրները կհայտնվեն, երբ մենք սպառենք տվյալ պահին գոյություն ունեցողները եւ, ուստի, մեզ պետք չէ մտածել էներգիայի կոնսերվացման, նրա սպառման արդյունավետության կամ արտադրման այլընտրանքային աղբյուրների մասին: Բայց մենք գտնվում ենք այդ գործընթացի վերջում, եւ նման ձեւով դատողություններ այլեւս չի կարելի անել, որովհետեւ էներգիայի նոր մատչելի աղբյուրներ գոյություն չունեն:

Հարց – Մենք կարո՞ղ ենք այն ամենը, ինչը որ օգտագործում ենք, փոխարինել նորով:

Պատ.– Պարզ չէ, թե տվյալ իրավիճակում ինչ կարող ենք անել: Ակնհայտ է սոսկ մի բան. մեզ հարկավոր է սովորել շատ բաներից անհամեմատ ավելի երկար օգտվել, քան այժմ, խնայողաբար օգտագործել ռեսուրսները եւ վերակառուցել մեր քաղաքներն ու համակարգերը՝ հաշվի առնելով էներգիայի սպառման արդյունավետության բարձրացումը: Ուստի ապագա ինովացիոն հետազոտություններն ու տեխնոլոգիաներն իսկապես ուղղված կլինեն արդյունավետության բարձրացմանը:

Հարց – Ի՞նչ ժամանակահատվածների մասին է խոսքը:

Պատ.– Ճգնաժամի գագաթնակետը դեռ մի քանի տարի հետո է սպասվում վերապրել, սակայն ես կասեի, որ մենք պետք է սկսենք հիմա, եթե ցանկանում ենք 10, 20 կամ 30 տարի հետո խուսափել իսկական աղետալի իրավիճակից, երբ նյութերի մեծ մասը, որ մենք ունենք, անհամեմատ ավելի հազվագյուտ կլինի: Մեզ մոտ կլինեն ավելի շատ կոնֆլիկտներ, ճգնաժամեր: Սակայն ես նաեւ մտահոգված եմ, որ մեզ մոտ տեղի կունենան առավել շատ բնապահպանական աղետներ, ինչպես Deepwater Horizon հորատման հարթակի վրա, որոնք մեզ կհիշեցնեն այն վտանգների մասին, որ իրենց մեջ թաքցնում են էներգիայի ու հանքանյութերի հատուկ տեսակները: Ահա թե ինչ է մեզ սպասվում, եթե մենք արդեն այսօր չսկսենք փոխել մեր վարքագիծը:

inosmi.ru
21.03.2012

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Այշե Զյուր	
ՀԱՅ–ԹՈՒՐԹԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1
Գագիկ Տեր-Հարությունյան	
ՆՈՐ ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔ.	
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ	8
Սեւակ Սարուխանյան	
ԻՐԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ	
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ	14
Բենիամին Պողոսյան	
ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	
ԻՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ 2012-ԻՆ	19
Արտաշես Տեր-Հարությունյան	
ԹՈՒՐԹԻԱՅԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԻ	
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	23
Հայկ Գաբրիելյան	
ԹՈՒՐԹԻԱ – ԵՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ	
ՈՒ ԿԻՊՐՈՍԻ ԽՆԴԻՐԸ	29
Սուրեն Մանուկյան	
ԾՈՑԻ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ»	36
Մայքլ Քլեյփ	
ՊԱՅՔԱՐ ՄՈԼՈՐԱԿԻ ՄՆԱՑԱԾ	
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ	44

*Շապիկին պատկերված է
Քվեշ բերդը (Գուգարք)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակները՝ «Arial Armenian», «Hay Helv»
եւ «VS Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: